ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

DOI: 10.57192/18291864-2025.2-28

Գևորգ Ս. Ստեփանյան
Պատմ. գիտ. դոկտոր
sasun-07@mail.ru
ORCID: 0009-0000-7536-6777

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԾԱՎԱԼԱՊԱՇՏԱԿԱՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐԸ ԶԱՔԱԹԱԼԱՅԻ ՕԿՐՈՒԳԻ ՆԿԱՏՄԱՄԲ

«Մեծ Ադրբեջան» ծրագրի համատեքստում (1918-1921 թթ.)*

Ամփոփում

1918-1920 թթ. ստեղծված աշխարհաքաղաքական նոր իրադրության պայմաններում վրացիներն ու կովկասյան թաթարները ներկայացան մեկը մյուսի դեմ ուղղված տարածքային պահանջներով: Վրաստանի և Անդրկովկասում հայտնված արհեստածին «Ադրբեջան» կազմավորման միջև սահմանավեճերը համառ ու տևական բնույթ ստացան և ընդհուպ ռազմական բախումների վերածվեցին հատկապես Զաքաթալայի օկրուգի պատկանելության հարցում: Ադրբեջանի նկրտումները Զաքաթալայի օկրուգի նկատմամբ տեղավորվում էին «Մեծ Ադրբեջան» ծրագրի շրջանակում: Օգտվելով տարածաշրջանում Օսմանյան կայսրության բանակի առկայությունից՝ մուսավաթական կառավարությունը, չսպասելով սահմանավեճերի վերջնական կարգավորմանը, նպատակադրվեց դավադիր քայլերով բռնազավթել Զաքաթալայի օկրուգը:

Ադրբեջանում 1920 թ. ապրիլի 28-ին խորհրդային իշխանության հաստատումից հետո Ադրբեջանական ԽՍՀ-ի ղեկավարությունը նույնպես պահպանեց մուսավաթականների ծավալապաշտության ռազմավարական ուղեգիծը և շարունակեց համակարգված քայլեր ձեռնարկել «Մեծ Ադրբեջան» ծրագիրն իրականացնելու համար: «Սոցիալիստական

* Հոդվածն ընդունվել է տպագրության 20.03.2025:

ինտերնացիոնալիզմի» քողի տակ գործող ՌԿ(բ)Կ ԿԿ Հյուսիս-Կովկասյան բյուրոն, հանձին նրա նախագահ Ս. Օրջոնիկիձեի, սատարեց այդ ծավալապաշտական քաղաքականությանը և Ադրբեջանական ԽՍՀ-ին բռնակցվեց Զաքաթալայի օկրուգը: Այսպիսով, եթե երիտթուրքերն ու մուսավաթականները համաթյուրքական օղուզական պետության հայեցակարգի շրջանակում ստեղծեցին արհեստածին «Ադրբեջան» կազմավորումը, ապա ՌՍԴԽՀ բարձրագույն ղեկավարությունը տարածաշրջանում թյուրքական գործոնի ամրապնդման միջոցով համաշխարհային հեղափոխության խթանման նպատակից ելնելով, ըստ էության, նույնպես նպաստեց «Մեծ Ադրբեջան» համաթյուրքական գաղափարի իրականացմանը:

Բանալի բառեր – Վրաստան, Զաքաթալայի օկրուգ, Օսմանյան կայսրություն, «Մուսավաթ», «Ահրար», համաթյուրքականություն, «Մեծ Ադրբեջան», Ս. Օրջոնիկիձե, Ասլան-բեկ Կարդաշև:

Gevorg S. Stepanyan
Doctor of Historical Sciences

AZERBAIJAN'S EXPANSIONIST AMBITIONS TOWARDS THE ZAKATALA DISTRICT IN THE CONTEXT OF THE "GREAT AZERBAIJAN" PROGRAM (1918-1921)

Abstract

Between 1918 and 1920, under the conditions of the new world order emerging after World War I, Georgians and Caucasian Tatars found themselves engaged in mutual territorial disputes. The border tensions between Georgia and the “Azerbaijan” formation that had emerged in Transcaucasia became frequent, long-lasting, and at times escalated into open military confrontations - particularly over the ownership of the Zakatala district. Taking advantage of the presence of the Ottoman Empire’s army in the region and without waiting for the final settlement of border disputes, the conspiratorial steps were taken by Musavat government to incorporate the Zakatala district into the newly formed “Azerbaijan” entity. Azerbaijan’s claims to this territory were closely tied to the broader ideological and political framework of the “Great Azerbaijan” program.

After the establishment of Soviet power in Azerbaijan on April 28, 1920, the leadership of the Azerbaijan SSR still adhered to the strategic line of expansionism of the Musavatists and continued to take systematic steps to implement the "Great

Azerbaijan" program. North Caucasian Bureau of Communist Party acting on the principles of "socialist internationalism", in the person of its chairman S. Ordzhonikidze supported this expansionist policy, and the Zakatala District was annexed to the Azerbaijan SSR. Thus, if the Young Turks and Musavatists created an artificial entity "Azerbaijan" within the framework of the concept of the general Turkic state, then the top leadership of the RSFSR, based on the idea of a world socialist revolution by strengthening the Turkic factor in the region, essentially contributed to the implementation of the common Turkic program of "Great Azerbaijan".

Keywords: Georgia, Zakatala district, Ottoman Empire, “Musavat”, “Akhrar”, Pan-Turkism, “Great Azerbaijan”, S. Ordzhonikidze, Aslan-bek Kardashev.

Геворг С. Степанян
Доктор ист. наук

ЭКСПАНСИОНИСТСКИЕ УСТРЕМЛЕНИЯ АЗЕРБАЙДЖАНА В ОТНОШЕНИИ ЗАКАТАЛЬСКОГО ОКРУГА В КОНТЕКСТЕ ПРОГРАММЫ «ВЕЛИКИЙ АЗЕРБАЙДЖАН» (1918-1921 ГГ.)

Резюме

В условиях новой геополитической ситуации 1918-1920 гг. грузины и кавказские татары предъявили друг другу территориальные претензии. Пограничные споры между Грузией и новосозданным образованием «Азербайджан» приобрели продолжительный характер и переросли в военные столкновения, особенно в вопросе о принадлежности Закатальского округа. Воспользовавшись присутствием в регионе армии Османской империи, не дожидаясь окончательного урегулирования пограничных споров, мусаватистское правительство предприняло конспиративные шаги по присоединению Закатальского округа к новосозданному образованию «Азербайджан». Амбиции Азербайджана в отношении Закатальского района были частью программы «Великий Азербайджан».

После установления в Азербайджане советской власти 28 апреля 1920 г. Руководство Азербайджанской ССР также придерживалось стратегической линии экспансионизма мусаватистов и продолжало предпринимать систематические шаги по реализации программы «Великий Азербайджан». Северокавказское бюро КП(б), действовавшее по принципам «социалистического интернационализма», в лице его председателя С. Орджоникидзе поддержало данную экспансионистскую политику, и Закатальский округ был присоединен к Азербайд-

жанской ССР. Таким образом, если младотурки и мусаватисты в рамках концепции общетюркского государства создали искусственное образование «Азербайджан», то высшее руководство РСФСР, исходя из идеи мировой социалистической революции путем усиления тюркского фактора в регионе, по сути, способствовало реализации общетюркской программы «Великий Азербайджан».

Ключевые слова – Грузия, Закатальский округ, Османская империя, «Мусават», «Ахрар», пантюркизм, «Великий Азербайджан», С. Орджоникидзе, Аслан-бек Кардашев.

Մուտք

2020 թ. 44–օրյա պատերազմից ու մանավանդ հայաշխարհի Արցախի ամբողջական ռազմակալումից և այնտեղ իրականացված ցեղասպանական գործողություններից հետո համաթյուրքական մարմանջով տարված Ադրբեջանը շարունակում է «Մեծ Ադրբեջան» ստեղծելու մուսավաթական իշխանությունների հանցավոր քաղաքականությունը: Բաքվի ծավալապաշտական նկրտումներով առաջնորդվող ադրբեջանցի պատմակեղծարարները սկսել են ավելի մեծ ուշադրություն դարձնել նաև մյուս հարևան երկրի՝ Վրաստանի պատմության հիմնահարցերին: Դրանց շարքում աստիճանաբար առարկայանում են ոչ միայն Վրաստանի հարավային ու հարավարևելյան երկրամասերի, այլև անգամ նրա մայրաքաղաք Թբիլիսիի հանդեպ դրսևորվող ակնհայտ հավակնությունները:

Ադրբեջանի կողմից ներկայումս դրսևորվող ծավալապաշտական հավակնությունների տեսական-գաղափարական հիմքերը հստակեցվել են դեռևս համաթյուրքականության հայեցակարգն ամբողջացրած **Զիյա Գյոքալփի** կողմից: Նրա առաջադրած համաթյուրքականության քաղաքական դոկտրինն ուներ եռաստիճան համակարգ: **Առաջին փուլից**՝ Օսմանյան կայսրության հպատակ ազգերի համատարած թյուրքացումից հետո պետք է իրականացվեր **երկրորդ փուլը**՝ օղուզական պետության ստեղծումը, որն ընդգրկելու էր Օսմանյան կայսրությունը, Արևելյան Այսրկովկասը, Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու երկրները և Իրանական Ատրպատական-Ազարբայջան նահանգը: **Երրորդ փուլով** պետք է իրագործվեր թուրանական կայսրության՝ «Մեծ Թուրանի» ստեղծումը, որը կտարածվեր Միջերկրական ծովից մինչև Խաղաղ օվկիանոս, Չինաստանից՝ մինչև Հյուսիսային օվկիանոս:

Օղուզական պետության ծրագրի կենսագործման շրջանակում մշակվել էր նաև մոտակա և հեռահար ծրագրերից բաղկացած ռազմաքաղաքական հայեցակարգ: Ըստ այդմ՝ մոտակա ծրագրով նախատեսվում էր Արևելյան Այսրկովկասի նվաճմանը զուգահեռ ստեղծել «Ադրբեջան» հորջորջումով «Արևելակովկասյան մուսուլմանական» կազմավորում, որը որպես մեկ հանգրվանի իրականացում՝ դառնալու էր երիտթուրք-մուսավաթական դաշինքի հիմնական գործելադաշտն ու քաղաքական հենարանը: Այնուհետև այդ հիմքի վրա Օսմանյան կայսրության կազմում՝ Սև ծովից մինչև Կասպից ծով՝ Բաթումից մինչև Բաքու, ներառյալ Իրանական Ատրպատական-Ազարբայջան նահանգն ընկած տարածքները, ստեղծվելու էր այսպես կոչված «Մեծ Ադրբեջան» պետությունը (**Stepanyan**, 2022):

Հեռահար ծրագրով «Մեծ Ադրբեջան»-ը՝ որպես օղուզական պետության ստեղծման առաջին օղակ, պետք է կամրջեր Օսմանյան կայսրությունը Կենտրոնական Ասիայի թյուրքալեզու ժողովուրդների հետ, ինչը հիմք էր դառնալու մեկ ընդհանուր՝ համաթյուրքական տանիքի տակ երրորդ փուլի առաջադրանքի՝ թուրանական կայսրության ստեղծման համար: Այսպիսով՝ «Մեծ Ադրբեջան» ծրագիրը պետք է դառնար համաթուրանական կայսրության գաղափարաքաղաքական հենքը:

Երիտթուրքերի և մուսավաթականների կողմից մշակված ծրագրով օղուզական պետության ստեղծման առաջին քայլը «Մուսուլմանական ժամանակավոր ազգային խորհրդի» (նախագահ՝ Մ. Է. Ռասուլզադե) կողմից 1918 թ. մայիսին «Ադրբեջան» արհեստածին կազմավորման հռչակումն էր՝ նույն անվան միջոցով հավակնելով Իրանի հյուսիս-արևմտյան Ատրպատական-Ազարբայջան նահանգին (Азербайджанская Демократическая Республика (1918–1920), 1998; **Էնաեթոլլահ Ռէզա**, 1994; **Ասատրյան**, **Գևորգյան**, 1990; **Stepanyan**, 2013): Այս առիթով ուշագրավ տեղեկություն է հայտնում Հալիլ փաշայի շտաբի պետ, գնդապետ **Էռնստ Պարակվինը**, որը պաշտոնի բերումով հաճախակի հանդիպումներ է ունեցել նրա հետ: Բեռլինում լույս տեսնող առաջատար “Berliner Tageblatt” լրագրի 1920 թ. հունվարի 28-ի համարում հրապարակած «Քաղաքականությունը Արևելքում» հուշերում վերջինս վկայակոչել է Հալիլի խոսքերը. «**Երբ Կովկասը բաժանուեց չորս հանրապետութիւնների, մի ամուր կուան հաստատուեց թաթարական հանրապետութեան մէջ, Կուր գետի արևելեան աւազանում, որ կոչուեց Ադրբէջան: Անունը լա՞ւ ենք ընտրել չէ՞, ասում էր Խալիլ փաշան քմծիծաղով, ակնարկելով պարսկական Ատրպատականը, որի այդ նոր հանրապետութեան հետ ձուլումը ոչ միայն ցանկալի էր համարւում թիւրք ղեկավարների**

կողմից, այլև ամեն կերպ ձգնում էին իրագործել այդ» (1920, N 57; 1920, N 55; **Paraguin**,1920, № 50) (ընդգծումը մերն է – Գ. Ս.):

Երիտթուրք-մուսավաթ ցեղասպանական դաշինքը, հագուրդ տալով համաթյուրքական-առավելապաշտական նկրտումներին, փորձում էր իրականացնել «Մեծ Ադրբեջան» ծրագիրը: Ուստի վերաձևելով Կովկասի վարչաքաղաքական քարտեզը՝ մուսավաթական կառավարությունը երիտթուրքերի հովանու ներքո ծրագրել էր «Մեծ Ադրբեջան»-ի մեջ ներառել Գանձակ-Ելիզավետպոլի և Բաքվի նահանգները, Երևանի նահանգի հարավային մասը, Վրաստանից՝ Թիֆլիսի նահանգի հարավային մասը և Դաղստանի հարավային մասի լեզգիաբնակ շրջանները (**Stepanyan,** 2022): Էնվեր փաշայի և Լեռնականների Հանրապետության նախագահ Թափա Չերմոևի կազմած քարտեզի հիման վրա «Մեծ Ադրբեջան»-ի ընդհանուր տարածքը պետք է կազմեր 140.000 կմ՝ Կասպից ծովից մինչև Սև ծով (**Լա Շընէ**, 1992): Այլ խոսքով՝ մուսավաթականների տարածքային հավակնությունները գերազանցում էին երևակայական պատկերացումների բոլոր չափերը:

Հայաստանի Հանրապետության տարածքներից բացի՝ մուսավաթական Ադրբեջանը հավակնություններ ուներ նաև նախկինում Թիֆլիսի նահանգի մեջ մտնող և աշխարհագրական դիրքով ու ռազմավարական առումով կարևոր նշանակություն ունեցող Զաքաթալայի օկրուգի, Սղնախի ու Թիֆլիսի գավառների մահմեդականներով բնակեցված շրջանների նկատմամբ (Անդրկովկասի կոնֆեդերացիայի հարցի շուրջը, 1918, № 151; **Авалов**, 1924; **Zenkovsky**, 1960):

Այսպիսով, պատմության քաղաքական թատերաբեմում հայտնված մտացածին «Ադրբեջան» կազմավորումը, նախկին Բաքվի նահանգը հռչակելով «ադրբեջանական», կամայականորեն տարածքային հավակնություններ ներկայացրեց և փորձեց իր անօրեն «իրավասությունը» տարածել ինչպես Երևանի, Գանձակ-Ելիզավետպոլի և Թիֆլիսի նահանգների մի շարք գավառների, Դաղստանի, այնպես էլ ի հնուց անտի Պարսկաստանի մաս կազմող Ատրպատական-Ազարբայջան նահանգի նկատմամբ:

1. Տարածքային խնդիրները նորանկախ Վրաստանի Հանրապետության և արհեստածին «Ադրբեջան» կազմավորման միջև

Հայտնի է, որ Այսրկովկասը ռուսական տիրապետության տակ անցնելուց հետո ցարական կառավարության անցկացրած վարչական բաժանումների և վերախմբավորումների հիմքում դրված էին ոչ թե երկրամասում ապրող ազգաբնակչության էթնիկ առանձնահատկություններն ու այնտեղ ապրող բնիկ ժողովուրդների պատմական հայրենիքի տարածքային սկզբունքներն ու իրավունքները, այլ հնարավորինս դյուրին կառավարման և իշխելու գործոնը: Կամայականորեն ոչ ըստ ազգային ու պատմաէթնիկական հատկանիշի կատարված վարչական բաժանումները հատկապես շատ աննպաստ պայմաններով էին իրականացվել հայերի համար: Ինչպես, օրինակ, հայկական Զավախքը ներառող Ախալքալաքի ու Ախալցխայի գավառները և Բորչալուի (Լոռի) գավառը տրվել էին Թիֆլիսի նահանգին: Այսպես, Այսրկովկասի վարչատարածքային վերաբաժանումների նոր փուլում՝ 1867–1868 թթ. Թիֆլիսի վերակազմված նահանգը բաղկացած էր 9 գավառից. դրանք էին Թիֆլիսը (Թիֆլիս կենտրոնով), Ախալքալաքը (Ախալքալաք), Ախալցխան (Ախալցխա), Բորչալուն (Շուլավեր), Գորին (Գորի), Դուշեթը (Դուշեթ), Սղնախը (Սղնախ)[32], Թելավը (Թելավ), Թիոնեթին (Թիոնեթ) և Զաքաթալայի[33] օկրուգը (Զաքաթալա (Свод статистических данных о населени Закавказкого края 1886 г., 1893):

---

[32] Սղնախը կառուցել է վրաց թագավոր Հերակլ II–ը: Մեծ թվով հայեր XVIII դ. 60–ական թվականներին Արցախից և Գանձակից գաղթել են այնտեղ: Ճանապարհորդ Գիլդենշտեդտը նշում է, որ 1772 թ. Սղնախի բնակչությունը բաղկացած էր 84 հայ իշխաններից (**Гильденштедт**, 1809): 1881 թ. տվյալներով Սղնախի գավառի 74.142 բնակչից հայ էր 55.467–ը (КК на 1982; **Մելքոնյան**, 2003): 1914 թ. տվյալներով, հայերի թիվը քաղաքում 14.526, 1916 թ.՝ 15.000 էր (КК на 1915; КК на 1917): Սղնախը մինչև 1930–ականները հիմնականում եղել է հայաբնակ; **Վարդանյան–Այվազյան**, 2014):

[33] Զաքաթալան պատմական Կամբեճան (տարբ.՝ Քանբիճան, Քամբեճան, Անբեճան, Ճար/Զար) գավառն է (**Խորենացւոյ** յաւելուածովք նախնեաց: **Սուքրեան**, 1881): Գտնվում էր Կուր գետի և Կապ–կոհ լեռնագոտու միջև, Կամբեճ (Իորի) և Աղվան (Ալազան) գետերի ստորին հովտում: Տարածքը կազմել է 7510 կմ^2 (**Երեմյան**, 1963): Հույն պատմիչ և աշխարհագրագետ Ստրաբոնի (մ.թ.ա. I դ.) երկում, որտեղ պարզ ներկայացված են Հայաստանի, Վրաստանի և Աղվանքի սահմանները, երկու դեպքում էլ Կամբեճանը ներկայացվում է Հայաստանի կազմում. «Փավենան ևս Հայաստանի գավառներից է, ինչպես նաև Կոմիսենան ու Օրքիստենան...: Խորզենան ու Կամբիսենան (իմա՛ Կամբեճան – Գ. Ս.) ամենահյուսիսայիններն են և բոլորից շատ են ծածկված ձյունով. նրանք սահմանակցում են Կովկասյան լեռներին, Իբերիային և Կոլխիդային» (**Страбон**, 497): Մյուս հաղորդմամբ՝ «Հայաստանն իրենից ներկայացնում է մասամբ հարթավայր, մասամբ էլ լեռնային երկիր, ինչպես Կամբիսենը (իմա՛ Կամբեճան – Գ. Ս.), ուր հայերը սահմանակցում են միաժամանակ իբերների ու ալբանացիների հետ» (**Ստրաբոն**, 31): Կամբեճան գավառում ընդհուպ մինչև XV դարը, բնակվում էին մեծ թվով հայեր (**Տեր–Ղևոնդյան**, 2003; **Վարդանյան**, 2012: Կամբեճանի հյուսիսային հատվածին հետագայում տրվել են **Ճար**, այնուհետև՝ **Զաքաթալա**

Ավելի ուշ՝ 1903 թ., 3695,2 քառ. վերստ տարածությամբ Զաքաթալայի օկրուգի վարչական կարգավիճակում փոփոխություն մտցվեց. օկրուգը հանվեց Թիֆլիսի նահանգի կազմից, չներառվեց որևէ նահանգի մեջ և վարչական առումով չորս մասի բաժանվելով՝ ստացավ հատուկ օկրուգի կարգավիճակ (**Шапшович**, 1914):

Այս դրությունը պահպանվեց մինչ Այսրկովկասում սկիզբ առած սահմանավեճերը՝ 1917 թ., Փետրվարյան հեղափոխությունից հետո: Դրանք հատկապես ուժգնացան 1918 թ. մայիսից՝ Այսրկովկասում երեք նորակազմ (Վրաստան, Ադրբեջան, Հայաստան) հանրապետությունների ստեղծումից հետո (**Խատիսեան**, 1923, N 3431): Անկախություն հռչակելուց հետո և հաջորդ տարիներին այդ հանրապետությունները կանգնած էին տարածքային և սահմանային վեճերի հիմնախնդրի առջև, որոնք տխուր ժառանգություն էին մնացել ռուսական ինքնակալության տիրապետության ժամանակներից ի վեր: Սահմանային վեճերը շատ հաճախ դառնում էին դիվանագիտական հարաբերությունների սրման, բախումների ու պատերազմների պատճառ («Վրաց կեանք», 1919): «Եղած վէճերուն խառնուեցան հողային-սահմանային վէճերը,- գրում է Ալ. Խատիսյանը,- որոնք պատճառ դարձան պատերազմներու Հայաստանի ու Վրաստանի միջեւ (1918) եւ Հայաստանի ու Ատրպէճանի միջեւ (գրեթէ երկու-երեք տարի, քրոնիկ կերպով)» (**Խատիսեան**, 1923, N 3431):

Վերոհիշյալ գավառների պատկանելության հարցը վերջնականապես իրենց օգտին լուծելու համար դիվանագիտական սուր պայքար էր ծավալվել հատկապես Վրաստանի Հանրապետության և արհեստածին «Ադրբեջան» կազմավորման միջև (**Ռուբէն**, 1982): Այսպիսով, ստեղծվել էր մի իրավիճակ, երբ Վրաստանն ու Ադրբեջանը, անտեսելով ի սկզբանե

անվանումները (**Բարխուտարեանց**, 1893): Ավանդության համաձայն՝ Զաքաթալա առաջացել է Զաքար և Թալա երկու եղբայրների անունների միացումից: Ըստ աշխարհագրագետ, բառարանագիր Սուքիաս Էփրիկյանի՝ «...ժամանակաւ Զաքար և Թալայ անուն երկու եղբարց մին՝ Զաքար, հիւսիս արեւելեան կողմը ձար գիւղի մէջ կը բնակի եղեր, իսկ Թալայ՝ հարաւակողմը Թալայ գիւղի մէջ, և թէ այս երկու անուանց միացմամբ յորջորջուեր է երկու գիւղից մէջ գտնուած քաղաքն՝ Զաքարթալայ, և հետզհետէ գործածուելով՝ ը տառն ոչնչացեր է» (**Էփրիկեան**, 1903-1905, 767):

XIX դարավերջին և XX դ. սկզբին Զաքաթալայի օկրուգի էթնիկ կազմն ու ժողովուրդների բնակեցվածությունը խիստ բազմազան էր: 1897 թ. համառուսաստանյան առաջին մարդահամարի տվյալների համաձայն՝ օկրուգի բնակչությունը կազմում էր 82.224 մարդ, որոնցից 31.670-ը (37,6%) ավարներ, 28.950-ը (34,4%) կովկասյան թաթարներ, 12.391-ը (14,7%) վրացիներ, 7.441-ը (8,8%)ց(ծ)ախուրներ, 975-ը (1,2 %) կյուրիններ, 2100-ը (2,5%) հայեր, 434-ը (0,4%) ռուսներև այլն (**Ասոյան**, 2010): 1914 թ. տվյալներով, հայերի թիվն ամբողջ օկրուգում 3002 էր, որից բուն քաղաքում՝ 2165 (КК на 1915), 1916 թ.՝ 2530 (КК на 1917):

հայերին պատկանող և գերազանցապես հայերով բնակեցված տարածքների օրինական տիրոջ՝ Հայաստանի Հանրապետության իրավունքները, քողարկված ու բացահայտ միջոցներով փորձում էին տիրանալ դրանց (Армения и Азербайджан, 1919): Այդ պայքարում հատկապես ակնառու էր Ադրբեջանի անհագ ախորժակը: Որպեսզի «...թաթարներով բնակեցված բոլոր վայրերը պատկանեն Ադրբէյջանի հանրապետութեանը» (Միջադէպ Վրաստանի եւ Ադրբէյջանի միջեւ, 1918, N 145), մուսավաթականները ծավալապաշտական նկրտումներ արտահայտեցին գրեթե բոլոր հարևանների նկատմամբ՝ պահանջելով ամբողջ Արևելյան Այսրկովկասը, ներառյալ՝ Դաղստանը (**Хармандарян**, 1969): Պատահական չէ, որ ՌՍԴԲԿ(բ) Բաքվի կոմիտեի անդամ, կովկասյան թաթարների սոցիալ-դեմոկրատական «Հյումմեթ» (“Hümmət” – «Եռանդ») կազմակերպության օրգանի խմբագիր Նարիման Նարիմանովը (հետագայում՝ Ադրբեջանական ԽՍՀ Ռազմահեղկոմի նախագահ) դեռևս 1917 թ. Փետրվարյան հեղափոխությունից հետո՝ մայիսի վերջերին, Թիֆլիսում, վրաց հասարակական-քաղաքական գործիչներ Ն. Ժորդանիայի, Ե. Գեգեչկորիի, Ն. Ռամիշվիլիի և այլոց մասնակցությամբ Այսրկովկասի ժողովուրդների սահմանային-տարածքային ընթացիկ խնդիրների լուծման ուղիների քննարկման ժամանակ գայթակղելով վրացիներին հայտարարել էր. «**Մենք պետք է մտածենք Մեծ Ադրբեջանի, իսկ դուք՝ Մեծ Վրաստանի մասին**» (**Нариманов**, 1922, 1) (ընդգծումը մերն է – Գ. Ս.): Այս փաստարկումն ի ցույց է դնում «սոցիալ-դեմոկրատի» դիմակով մշտապես քողարկված Ն. Նարիմանովի ծավալապաշտական-համաթյուրքական, առավել ևս՝ հակահայկական մեքենայությունների խոհանոցը: Մինչդեռ, եկվոր կովկասյան թաթարները որպես անդրալթայան տափաստաններից ներխուժած վաչկատուն թյուրք-օղուզական ցեղերի հետնորդներ, ընդհանրապես պետք է զրկվեին Այսրկովկասի տարածքների նկատմամբ որևէ իրավունքից:

Առավելապաշտական պատկերացումների վրա էր խարսխված նաև մուսավաթականների, իսկ հետագայում՝ Ադրբեջանական ԽՍՀ ղեկավարների «Մեծ Ադրբեջան» ստեղծելու քաղաքականությունը: Այս պերճախոս վկայությունն ակնհայտորեն ցույց է տալիս, որ Նարիմանովի հետագա բոլշևիկյան բառապաշարի մեջ առանցքային տեղ էին զբաղեցրել զավթողական նկրտումները: Այս կարծրացած ծավալապաշտական հռետորաբանությունը դրսևորվում էր այն ժամանակ, երբ Արևելյան Այսրկովկասում դեռևս չէր ստեղծվել «Ադրբեջան» կեղծ անունով կազմավորումը: Վրաց-թաթարական քաղաքական շրջանակներում նմանաբնույթ կուլիսային քննարկումները քիչ ավելի ուշ հանգեցրին ի սկզբանե հայկա-

կան տարածքների նկատմամբ բացահայտ զավթողական քաղաքակա-նության: Այս առնչությամբ “Грузия” օրաթերթն անդրադառնալով վրաց-թաթարական քաղաքական համագործակցության ձևավորմանը, գրում էր. «Այն ժամանակ, երբ դեռ «Ազերբայջան» տերմինը գործածութեան մէջ չէր, վրաց ժողովուրդը միշտ բարեկամ է եղել Անդրկովկասեան մուսուլ-մաններին...» (Ադրբէջանեան անցքերը, 1920, N 92): «Հորիզոն» օրաթերթն 1918 թ. հունիսի 15-ի «Վտանգաւոր ճանապարհ» վերտառությամբ խմբա-գրականում գրում էր. «Շնորհիւ քաղաքական անբարեյաջող պայմանն-երի՝ հայ ժողովրդի համար ստեղծուել էր ծայր աստիճանի ծանր վիճակ: Նրա հողերի լաւագոյն մասերը խլել է Տաճկաստանը: Նա կծկուել է չոր ու ցամաք լեռների ու ձորերի մէջ: Սպասելի էր, որ նրա հարևաններն այս վայրկյանին առանձնապէս փափկանկատ ու զիջող կը լինեն: Բայց, տա-րաբախտաբար, ճիշտ դրա հակառակն ենք տեսնում: Մի կողմից Ադրբէ-ջանն է պահանջներ անում, միւս կողմից՝ բոլորովին անսպասելի կեր-պով՝ Վրաստանն է մեջտեղ ընկնում ագրեսիւ և իմպերիալիստական ծրագրով» (Վտանգաւոր ճանապարհ, 1918, N 115): Այդ հետևանքներից մե-կը հանդիսացավ 1918 թ. դեկտեմբերին հայ-վրացական կարճատև պա-տերազմը՝ Ջավախքի և Լոռիի համար: Վրացական բանակը ծանր պար-տություն կրեց: Հայկական զորքերի առաջխաղացումը դեպի մայրաքա-ղաք Թիֆլիս կանխվեց միայն անգլիացիների միջամտությամբ և 1919 թ. հունվարի 9-17-ը կայացած հայ-վրացական կոնֆերանսում կնքվեց հաշ-տություն (**Վրացեան**, 1982):

Վրաստանի և Ադրբեջանի միջև նույնպես սահմանավեճերը հա-մառ և տևական բնույթ ստացան և վերածվեցին ընդհուպ ռազմական բախումների հատկապես հնուց անտի տեղաբնիկ հայ էթնոսով բնակեց-ված Կամբեճան-Զաքաթալայի օկրուգի պատկանելության հարցում: Զա-քաթալայի օկրուգը հյուսիս-արևելքից սահմանակից էր Դաղստանի մար-զին, հարավ-արևելքից՝ Գանձակ-Ելիզավետպոլի, արևմուտքից՝ Թիֆլիսի նահանգներին: 1865 թ. վարչական նոր բաժանման արդյունքում Զաքաթա-լայի օկրուգը դարձել էր առանձին օկրուգ՝ անմիջականորեն ենթարկվելով Կովկասի փոխարքային (Указ об учреждении Тифлисского генерал-губернаторства, 26, 1860 г; Полное Собрание Законов Российской Империи, 1862, 70): Ցարական կառավարության 1867 թ. դեկտեմբերի 9-ի օրենքով, երբ Այսրկովկասում անցկացվեց վարչատարածքային նոր բաժանում, Զա-քաթալայի օկրուգը հայտնվեց Թիֆլիսի նահանգի մեջ (Отчет по главному управлению наместника кавказского за первое десятилетие управления Кав-

казским и Закавказским краем его императорским высочеством великим князем **Михаилом Николаевичем**, 1873):

Ադրբեջանի նկրտումները Զաքաթալայի օկրուգի նկատմամբ տեղավորվում էին «Մեծ Ադրբեջան» ծրագրի շրջանակում (**Stepanyan**, 2022): Իսկ ինչ վերաբերում է Վրաստանին, ապա այն իր սահմաններում ներառելու ցանկությունից զատ՝ վրաց կառավարությունը շահագրգռված էր նաև Զաքաթալայի հարուստ ընդերքով: Ինչպես նշել է հրապարակագիր Լիպարիտ Նազարյանը. «...միայն քաղաքական շարժառիթներով չէր, որ վրաց կառավարութիւնը իր նայուածքը կուղղէր դէպի Սուխումի ծխախոտը, Բաթումի ենթա-տրոպիքական մշակոյթները եւ հարուստ Զաքաթալան» (**Լեռնեան**, 1926, N 4378): Ուստի Վրաստանի կառավարության կողմից ստեղծված Վրաստանի սահմանները որոշող հանձնաժողովը պատմաբան Պավլե Ինգորոկվայի զեկույցի հիման վրա 1918 թ. հունիսի 11-ի նիստում երկրի սահմանների մեջ էր ներառել նաև Զաքաթալայի օկրուգը (Վրաստանի սահմանները որոշող յանձնաժողով, 1918, N 117; Изъ истории армяно-грузинскихъ отношений. 1918 год (пограничные конфликты; переговоры; война; соглашение), 1919): Ի դեպ, օկրուգի նկատմամբ իր իրավունքներն էր ցանկանում հաստատել նաև Լեռնականների Հանրապետությունը: Դեռևս Փետրվարյան հեղափոխությունից հետո Վլադիկավկազ քաղաքում 1917 թ. մայիսի 1-10-ը 300 պատգամավորների մասնակցությամբ հրավիրված Հյուսիսային Կովկասի լեռնականների 1-ին համագումարը, որին մասնակցել է նաև Զաքաթալայի օկրուգից ընտրված պատգամավոր, ստեղծել էր «Հյուսիսային Կովկասի և Դաղստանի լեռնականների միության Ժամանակավոր կենտրոնական կոմիտե» (նախագահ՝ Բասիյաթ Շախանով) (**Кармов**, 2014, 50): Միության կազմում ընդգրկված էր նաև Զաքաթալայի օկրուգը: Համագումարը և Կոմիտեն իրականացնում էին օրենսդիր և գործադիր մարմնի գործառույթները, այդ թվում նաև՝ Զաքաթալայի օկրուգում, որն ուներ իր ներկայացուցիչը Կենտրոնական կոմիտեում (**Какагасанов**, **Каймаразова**, 2013; **Хапизов**, **Галбацев**, 2016): Միության 2-րդ համագումարում (1917 թ. սեպտեմբերի 21-23) նորընտիր Կենտրոնական կոմիտեի կազմում ևս ընդգրկված էր Զաքաթալայի օկրուգի ներկայացուցիչը (Материалы съездов горских народов Северного Кавказа и Дагестана 1917 года): Հետագայում, երբ 1918 թ. մայիսի 11-ին հայտարարվեց Լեռնականների Հանրապետության ստեղծման մասին, հանրապետության կազմում ներառված էր նաև Զաքաթալայի օկրուգը (Союз объединенных горцев Северного Кавказа и Дагестана (1917-1918 гг.) и

Горская республика (1918–1920 гг.)): Փարիզի խաղաղության Վեհաժողովին լեռնականների պատվիրակության (ղեկավար՝ Թ. Չերմոև) 1919 թ. մայիսի 9-ին ներկայացրած հուշագրում Զաքաթալայի օկրուգը ևս ներառված էր հանրապետության կազմում (**Исхаков**, 2014):

Իսկ երիտթուրք-մուսավաթական դաշինքը Զաքաթալայի օկրուգը զավթելուն ձեռնամուխ է եղել տակավին 1918 թ. մայիսից՝ Բաքվի դեմ արշավանքի ընթացքում: Այդ նպատակով Նուրի փաշան Էնվեր փաշայի հրահանգով ծրագրել էր ռազմակալել նաև Ղազախի և Զաքաթալայի գավառները: Ուստի իսլամական բանակի հրամանատարությունը՝ գնդապետ Յուսուֆ բեյի գլխավորությամբ ու մուսավաթականների օգնությամբ եռանդուն միջոցների դիմեց Զաքաթալայում ևս բռնի կերպով կամավորներ հավաքագրելու, ընդհանուր հարձակմանն օգնելու մարտական խնդիրը լուծելու համար: Նուրի փաշան մահմեդական զորամասերի հրամանատար էր նշանակել գեներալ-լեյտենանտ Ֆերիկ Ալի-աղա Շիխլինսկիին (**Հարությունյան**, 1984): Հեծյալ հարյուրակներ էին ստեղծվել նաև Զաքաթալայի և Ղարայազի (Գարդաբանի – Գ. Ս.) շրջաններում: Այդ զորամիավորումները գլխավորում էր գեներալ-մայոր, արքայազն Ֆազուլլա Միրզա Ղաջարը (**Лудшувейт**, 1966):

Զաքաթալայի կովկասյան թաթարները՝ մուղալները[34] և մահմեդական վրացիները՝ ինղիլոյները[35], ունենալով թուրքական կողմնորոշում,

[34] Զաքաթալայի օկրուգի մերձալազանյան հատվածում, Դաղստանում և նրան հարող լեզգիաբնակ ու ավարաբնակ տարածքներում ժամանակին հաստատված և իրենց ինքնությունը վերջնականապես չհստակեցրած կովկասյան թաթարները մինչ այսօր էլ կոչվում են իրենց եկվոր նախնիների՝ քոչվոր ցեղերի անուններով՝ **մուղալներ** կամ **թարաքամաներ** (տարբ. թերեքեմե), այսինքն՝ մոնղոլներ կամ թուրքմեններ (Военый обзоръ Тифлисской губернии и Закатальскаго округа, 1872; **Քոչարեանց**, 1872; **Սօյզադէ,** 1918, № 144):

[35] Զաքաթալայի օկրուգում բնակվող վրացիներին կոչում էին **ինղիլոյցիներ:** Վրաց ազգագրական այդ խումբը խոսում է վրացերենի ինղիլոյական բարբառով: Կրոնական առումով նրանք բաժանվում են սունի մահմեդականների և քրիստոնյաների: Ըստ Արտ. Աբեղյանի՝ «**Մահմետական** տիրապետութիւնը զօրաւոր ազդեցութիւն է ունեցել վրաց վրայ նաեւ նրանով, որ ժամանակի ընթացքում շատ վրացիներ մահմետականութիւն ընդունելով բոլորովին ձուլուել են թուրքերի հետ: Որոշ թուով մահմետական վրացիներ սակայն դեռ եւս պահել են իրենց մայրենի լեզուն՝ վրացերէնը, հարկաւ մեծապէս ազդուելով տաճկերէնից: Այսպէս, մամետական վրացիներ են ...ինղոլոյցիների մէկ մասը – Արեւելեան Վրաստանում» (**Աբեղեան**, 1924, 125–126): XIX դարավերջին և XX դարասկզբին Զաքաթալայի օկրուգն ուներ 8.727 ինղիլոյ բնակիչ: Ընդ որում, մահմեդական ինղիլոյները բնակվում էին Զաքաթալայում, իսկ քրիստոնյաները՝ Կախ ավանում (**Андреевскаго**. Издатели **Брокгауз**, **Ефрон**, 1894): Մանկավարժ Անդրեաս Արծրունին 1874 թ. հուլիսին ճանապարհորդելով Զաքաթալայում, «Մշակ»-ին օգոստոսի 3-ի ուղարկած թղթակցության մեջ գրում է. «Երկու ցեղերի (իմա՛ ավարների և ց(ծ)ախուրների – Գ. Ս.) լեզգիների մօտ ապրում են փոքր

թուրքական հրամանատարության հետ սերտ կապեր էին հաստատել: Ավելին, գավառական կոմիսար Մուսա-բեկ Շաբանբեկովի հրահանգով ինղիլոյ, համաթյուրքական հայացքներ ունեցող Բայրամ էֆենդի Կիչիկխանովի (**Хапизов**, **Галбацев**, 2016) գլխավորությամբ պատվիրակություն էր ուղարկվել Բաթում՝ «...հրաւիրելու թիւրքաց տէրութիւնը երկրին տէր ու տիրական լինելու իբրև իր բնական գաւառներից մէկին (sic!)» (**Սոյզադէ**, 1918, N 141):

Կարճ ժամանակ անց, թուրքական ռազմական ուժերը գնդապետ Իսմայիլ Հաքքը Ջանբուլաթ բեյի գլխավորությամբ ներխուժում են Զաքաթալա, և «...իբրև՝ լիակատար տէրեր, սկսում են իրանց կարգ ու կանոնը մտցնել ժողովրդի մէջ» (**Սոյզադե**, 1918, N 141): Իսմայիլ Հաքքը Ջանբուլաթ բեյի հրահանգով հրավիրված ժողովում վերջինս լեզգի[36] և կովկասյան թաթար բնակչությունից պահանջում է. «...անմիջապէս տալ 1000 հոգի իրանց զէնքերով ու ձիերով զօրք, պաշար, դրամ և այլն և այլն՝ «գեավուրների» դէմ պատերազմը շարունակելու համար» (**Սոյզադէ**, 1918, N 141):

Կամավորներ հավաքագրելու և զենք կուտակելու ժամանակ պատրաստ էր նաև հայահալած քաղաքականության հերթական առիթը՝ հայերը ճնշում են մահմեդականներին, ուրեմն նրանց բնակավայրերը պետք է հողմացրիվ անել, իսկ բնակչությունը՝ բնաջնջել: Այդ նպատակով էլ տեղի ունեցավ Զաքաթալա քաղաքի և օկրուգի հայաբնակ բնակավայրերի ասպատակումը (**Հարությունյան**, 228): Հավելենք, որ հայահալած քաղաքականությամբ աչքի էին ընկնում հատկապես իրեն «շեյխ» հռչակած «Մուսավաթ» կուսակցության անդամ, ազգությամբ ավար[37]: Ասլան-

---

թով թուրքեր (թաթարներ) աւելի դէպի Նուխու գաւառի կողմը և դէպի Ալազանի ձորը, արևելեան մասում, յետոյ առանձին գիւղերով մահմետական վրացիներ, որոնք ինգելօցի անուն են կրում» (**Արծրունի**, 1874, № 35):

[36] Զաքաթալայի օկրուգում և Արևմտյան Դաղստանում հնուց անտի բնակվում էին լեզգիական խմբի լեզուներով խոսող Բուն Աղվանքի բնիկ ժողովուրդների անմիջական հետնորդները՝ ավարներն ու ց(ծ)ախուրները, որոնք հայտնի էին հավաքական լեզգիներ կամ լեռնեցիներ անունով (**Андреевскаго**. Издатели **Брокгауз**, **Ефрон**, 1894): «Կովկասի ժողովուրդները» ուշագրավ ուսումնասիրության մեջ Արտ. Աբեղյանն այդ առիթով գրում է. «Կովկասի արեւելեան լեռնցիները յայտնի են լեզգի ընդհանուր անուան տակ: ...Լեզգիները խօսում են բազմաթիւ բարբառներով, որոնք իրարուց երբեմն այնչափ տարբերւում են, որ ոմանք նրանց առանձին-առանձին լեզուների շարքն են դասում: Այդ բարբառները, որոնց թիւը քսան եւ մէկ է հասնում, հինգ խումբի են բաժանւում: Ամենից աւելի տարածուածն է աւարական ցեղի լեզուն կամ **աւարերէնը**» (**Աբեղեան**, 1924, 120–121):

[37] Զաքաթալայում ապրող ավարները հայտնի էին **Զարո-Բելոկանի** լեզգիներ անունով: Լեզուն՝ ավարերեն էր՝ հյուսիսային և հարավային բարբառներով: Ավարները

բեկ Կարդաշևն[38] ու նրա ազգական, Զաքաթալա քաղաքի կոմիսար Ալի Աղանը (**Սօյզադէ**, 1918, N 145): Ասլան-բեկ Կարդաշևը, որը ժամանակին Զաքաթալայի վարչակազմում զբաղեցրել էր գրագրի պաշտոն, հնարովի կեղծ փաստաթղթերով հոգուտ կովկասյան թաթարների, բռնագրավել էր հայերի սեփականությունը: Ըստ «Սօյզադէ» հեղինակի, Կարդաշևը հայտնի էր դարձել «...թուրքերի համար ընդդէմ հայերի խնդիրներ, գանգատներ շարադրելու մէջ, որի համար միշտ էլ առատ վարձատրվել է» (**Սօյզադէ**, 1918, N 145): Մուսավաթականների ծավալապաշտական հավակնություններն էլ ավելի սանձարձակ էին դառնում: Հավակնելով Բորչալուի, Թիֆլիսի և Սղնախի գավառների մի մասին (Азербайджанская Демократическая Республика (1918–1920), б.д), իսկ Զաքաթալայի օկրուգը համարելով Ադրբեջանի այսպես կոչված «պատմական տարածք»[39] Ադրբեջանի արտգործնախարար Մ. Հ. Հաջինսկին 1918 թ. հունիսի 14-ին բողոքի նոտա է հղում Վրաստանի իր պաշտոնակից Նոյ Ռամիշվիլիին՝ վերոհիշյալ վայրերում տեղակայված վրացական զորքի ("Кавказское

մահմեդականություն են ընդունել XIII–XV դդ. ընթացքում: Սունի մահմեդական են (**Исламмагомедов**, 2002; **Магомедханов**, 2008):

[38] Խոշոր կալվածատեր Ասլան-բեկ Կարդաշևը (Գագարազուլ Հարիր Ասլան) ծնվել է 1866 թ. Զաքաթալայի օկրուգի ավարական Չուկակ գյուղում: Նշենք, որ որոշ հեղինակների մոտ Կարդաշևի ազգությունը սխալմամբ նշված է **կովկասյան թաթար**: Կարդաշևին «մի մուղալի որդի» է նշում «Սօյզադէ» հեղինակը Զաքաթալայից «Մշակ»-ին ուղարկած թղթակցության մեջ (**Սօյզադէ**, 1918, **N** 145): Պատմաբան Լև Պրոտասովի Դումայի պատմության վերաբերյալ մենագրության մեջ նշված է լեզգի (**Протасов,** 2008): Մինչդեռ, կովկասագետ Թիմուր Այտբերովը հստակ գրում է, որ Ասլան-բեկ Կարդաշևը ազգությամբ եղել է ավար (**Айтберов**, 2008): Կարդաշևն իրավաբանի մասնագիտությամբ ավարտել է Կ. Պոլսի համալսարանը: Եղել է 2-րդ Պետական Դումայի անդամ: 1917 թ. դարձել է «Մուսավաթ» կուսակցության անդամ: Եղել է կովկասյան թաթարների «ազգային» հորջորջվող խորհրդի և Սեյմի անդամ: 1918 թ. աշնանից գլխավորել է ծրագրային հիմնադրույթներով «Մուսավաթ»-ին հետևող «Ահրար» ("Əhrar" – «Ազատամիտ») կուսակցությունը, որը հիմնականում գործել է Շաքիի և Զաքաթալայի շրջաններում: Այնուհետև Նասիբ-բեկ Ռուսբբեկովի գլխավորած կառավարությունում 1919 թ. ապրիլի 14-ից մինչև նույն թվականի դեկտեմբերի 22-ը զբաղեցրել է երկրագործության նախարարի պաշտոնը: Ադրբեջանում խորհրդային կարգեր հաստատվելուց հետո Զաքաթալայում գլխավորել է բոլշևիկների դեմ 1920 թ. հունիսին բարձրացված զինված ապստամբությունը: Կարդաշևի մահվան թվականի վերաբերյալ առկա են իրարամերժ տեղեկություններ: Ըստ պաշտոնական վարկածի, ապստամբության ճնշումից հետո, գերեվարվել է և 1920 թ. հուլիսի 21-ին գնդակահարվել Բաքվում: Մեկ այլ տեղեկության համաձայն՝ Կարդաշևը ճողոպրել է Վրաստան, այնտեղից՝ Կ. Պոլիս և մինչև կյանքի վերջը հաշմանդամ վիճակում բնակվել այդտեղ (**Хапизов**, **Галбацев,** 2016):

[39] Այս և հարանման կեղծիքներով առլեցուն են խնդրո առարկա հարցին անդրադարձած ադրբեջանցի հեղինակների հոդվածները (**Рахманзаде,** 2013; **Мустафаева**, 2009):

слово”, 1918, № 205) դուրս բերման պահանջով (Азербайджанская Демократическая Республика (1918–1920), б.д): Դրա հետ միասին, ադրբեջանական կողմը շարունակում է զորք կենտրոնացնել նաև Զաքաթալայում (Азербайджанская Демократическая Республика (1918–1920), б.д):

Մուսավաթական կառավարությունը, օգտվելով իր համար ստեղծված ռազմաքաղաքական նպաստավոր պայմաններից և թևավորված Զաքաթալայում թուրքական զորքերի ներկայությամբ, չսպասելով սահմանավեճերի վերջնական կարգավորմանը, նպատակադրվեց դավադիր քայլերով Զաքաթալայի օկրուգը միավորել նորաստեղծ «Ադրբեջան» կազմավորմանը: Ավելին, Գանձակում հրավիրված կովկասյան թաթարների «ազգային» հորջորջված խորհրդի 1918 թ. հունիսի 17-ի նիստում, երբ քննարկվում էր այդ հարցը, խորհրդի անդամ Ասլան-բեկ Կարդաշևը (թուրքական գործակալ էր, որն ուներ համաթուրքական ձգտումներ) (**Айтберов**, 187), իր ելույթում սկզբունքորեն կողմ էր արտահայտվել օկրուգը Օսմանյան կայսրությանը միավորելուն (Протоколы заседаний мусульманских фракций закавказского сейма и азербайджанского национального совета 1918 г., 160): Իսկ մուսավաթական կառավարությունն իր նպատակին հասնելու մարտավարական ուղեգծի հիմքում դրել էր որոշակի հաշվարկ՝ կեղծ խոստումներ տալ, իբր, Զաքաթալայի օկրուգին կտրվեր ինքնավար կարգավիճակ (**Хапизов**, **Галбацев**, 2016):

Անշուշտ, Ադրբեջանը դիվանագիտական թակարդ էր պատրաստում Զաքաթալայի համար: Ուստի հավատալով մուսավաթականների խոստումներին, հենց Ասլան-բեկ Կարդաշևի մասնակցությամբ Զաքաթալայի «ազգային խորհուրդը» (նախագահ՝ Նուրուլլահ Քազի-զադե) (**Хапизов**, **Галбацев**, 2016)[40] հունիսի 26-ի նիստին որոշում է «Զաքաթալայի շրջանը միավորել Ադրբեջանի Հանրապետությանը՝ միաժամանակ պահպանելով այն որպես հատուկ վարչական միավոր (նահանգի իրավունքներով)» (**Айтберов**, 183): Սա այն էր, ինչի մասին երազում էր մուսավաթական կառավարությունը: Դառնալով դրության տերը, վերջինս հնարավորություն էր ստանում իրականացնելու իր զավթողական ծրագրերը: Զաքաթալայի Ազգային խորհրդի հունիսի 28-ի՝ օկրուգի ազգաբնակչության անունից հորինված հեռագրի հիման վրա, Ադրբեջանի կառավարությունը 1918 հունիսի 30-ին որոշում է կայացնում՝«Զաքաթալայի օկրուգը Ադրբեջանի Հանրապետությանը միացնելու վերաբերյալ» (Азербайджан-

[40] Ազգությամբ եղել է ավար:

ская Демократическая Республика (1918–1920), 1998 232; Адресъ-календарь Азербайджанской Республики на 1920-й г.; **Ставровскаго**, 1920): Նրանում մասնավորապես ասվում էր. «Համաձայն Զաքաթալայի ազգային կոմիտէի խնդիրքի՝ համարել Զաքաթալայի գաւառակը միացած Ադրբէյջանի հանրապետութեանը» (Գանձակում, 1918, N 145): Լեռնականների համար ճակատագրական այդ օրերին, այս իրադարձությունը չափազանց բացասաբար ընկալվեց Դաղստանում, այն համարելով ոչ իրավական (**Хапизов**, **Галбацев**, 2016):

Այդ որոշումից հետո մուսավաթական կառավարությունը օկրուգը վերածեց նահանգապետության և գեներալ-նահանգապետ նշանակեց ցարական բանակի նախկին գեներալ-լեյտենանտ Ալիյար-բեկ Հաշիմբեկովին (Լուրեր Զաքաթալայից, 1918; Азербайджанская Демократическая Республика (1918–1920), б.д**)**: Իսկ օկրուգին ինքնավարություն տալու խոստումն այդպես էլ մնաց օդում կախված:

Մուսավաթականները, փորձելով սեփական իշխանությունը անօրեն կերպով տարածել Զաքաթալայում, կարճ ժամանակ անց դրսևորեցին իրենց վայրագ էությունը. վերսկսվեցին քաղաքի և օկրուգի քրիստոնյա (հայ և ռուս) ազգաբնակչության նկատմամբ հալածանքները, սպանություններն ու թալանը: Քաղաքի կոմիսար Շամիլ Լևալետևն իր ավազակային խմբով «...մորթոտում ու կողոպտում էր ճամբորդ հայերին, մարդիկ դրկում հայերի տները՝ խոշոր գումար կորզելու և այլն» (**Սօյզադէ**, 1918, N 144): Հայատյաց քաղաքականությունը շարունակվեց նաև հաջորդ կոմիսարի՝ Թալա գյուղացի Մուսա-բեկ Շաբանբեկովի օրոք, որն «...իր ընկերների հետ սրի էր քաշել 6 հայերի, որոնց թում մի 5-6 տարեկան երեխայի» (**Սօյզադէ**, 1918, N 144): Մուսա-բեկ Շաբանբեկովի բարբարոսությունն այն աստիճանի էր հասել, որ կովկասյան թաթար խաժամուժին հրահանգել էր մոլուցքը թափել նաև քրիստոնեական (հայկական և ռուսական) գերեզմանատների վրա: «...Մուսաբէկը գերազանցեց իր ապիկար նախորդներին իր անսահման տգիտութեան ու ֆանատիկոսութեան շնորհիւ: Նրա օրով հայոց և ուղղափառների դրախտանման գերեզմանոցները հիմն ու վեր քար ու քանդ եղան թուրքերի ձեռքով, որ տեսնողի զարհուրանքն է գալիս» (**Սօյզադէ**, 1918, N 144)- հայտնում է «Սօյզադէ»-ն: Այս դեպքերը, որ աստիճանաբար լայն ծավալ էին ստանում, տարածվեցին նաև Զաքաթալայից 34 վերստ հեռավորության վրա գտնվող Կախ ավանի հայերի վրա (**Կզարթմյան**, 1924, N 166 (422): Նշենք, որ մինչև XVII դարասկիզբը մեծաթիվ հայեր են բնակվել Զաքաթալայի օկրուգի Դիպան, Բուխովու,

Մանրուխ, Ղում և այլ գյուղերում: Ավելին, XVIII դարից հիշատակվող Փասինջաղ գյուղը եղել է զուտ հայկական (**Айтберов**, 2000):

Զաքաթալայի շուրջ պայքարը հատկապես թեժացավ Կ. Պոլսում 1918 թ. հունիսի 25-ին հրավիրված կոնֆերանսի նախօրեին, որտեղ այսրկովկասյան նորահռչակ հանրապետությունների միջև պետք է լուծվեին սահմանային հարցերը: Ադրբեջանի նկրտումներն էլ ավելի որոշակի ընդգծվեցին կոնֆերանսին նախորդող պատվիրակությունների միջև տեղի ունեցած քննարկումների ժամանակ (Азербайджанская Демократическая Республика (1918-1920), б.д):

Բանն այն է, որ Ադրբեջանի կառավարությունը թուրքերի հովանավորությամբ Վրաստանից պահանջում էր, որ «թաթարներով բնակված բոլոր վայրերը պատկանեն Ադրբէյջանի Հանրապետութեանը» (Միջադէպ Վրաստանի եւ Ադրբէյջանի միջեւ, 1918, N 145): Այս նկատառումներով Մ. Է. Ռասուլզադեի գլխավորած ադրբեջանական պատվիրակությունն իր գործելաոճին հարիր դիմելով կեղծարարության, հանպատրաստից նենգափոխված քարտեզների վրա «Ադրբեջան» արհեստածին կազմավորման սահմաններում ընդգրկել էր պատմական Հայաստանին և Վրաստանին պատկանող մի շարք տարածքներ: Ինչպես ասվում է Ռասուլզադեի՝ 1918 թ. հուլիսի 19-ին արտգործնախարար Մ. Հ. Հաջինսկիին ուղարկած հաղորդագրության մեջ. «Բորչալուի և Ղարայազի տեղամասերը, Զաքաթալայի և Սղնախի գավառները տեղադրել ենք Ադրբեջանի քարտեզի վրա և պաշտպանված կլինեն: Միայն անհրաժեշտ է, որ դուք մեզ Բորչալուից և Ղարայազից ուղարկեք վճիռներ և որոշումներ, հեռագրեր և այլ փաստաթղթեր: Շատ հնարավոր է, որ դրանց կարիքը լինի, և հարկ լինի այս առումով «արշավ» սկսել» (Азербайджанская Демократическая Республика (1918-1920), 30):

Ի դեպ, այս հանգամանքը նկատի ունենալով՝ Կ. Պոլսում հրավիրված կոնֆերանսին մասնակից Լեռնականների Հանրապետության պատվիրակության ղեկավար, արտգործնախարար Հ. Բամատովը կառավարության նախագահ Թափա Չերմոևին 1918 թ. օգոստոսի 31-ին ուղարկած նամակում գրում էր. «...անհրաժեշտ է ինձ ուղարկել պատվիրակ կամ ինչ-որ որոշում Զաքաթալայի օկրուգից, որը կվկայի այս օկրուգը մեզ հետ կապված լինելու մասին: Այստեղ (Կ. Պոլսում – Գ. Ս.) ադրբեջանցիները հայտարարեցին, որ Զաքաթալայի շրջանը միացել է Ադրբեջանին, և ղեկավար օղակներում այս առումով շրջադարձ կատարվեց հօգուտ Ադրբեջանի: Առանց տեղական աջակցութ-

յան ես չեմ կարող պայքարել դրա դեմ» (Союз объединенных горцев Северного Кавказа и Дагестана (1917–1918 гг.), 93):

Զաքաթալան ռազմակալած թուրքական զորքերի և մուսավաթականների կամայական գործողությունները, մթերքների բռնագանձումը, հարկադիր զինակոչը և մեծաքանակ հարկերը, ծանր կացության առաջ կանգնեցրին Զաքաթալայի ազգաբնակչությանը, մասնավորպես՝ լեզգիներին և հայերին: Զաքաթալայի նահանգապետ Ալիյար-բեկ Հաշիմբեկովի հաղորդման համաձայն՝ «...թուրքական սպաների ինքնակամ գործողությունները, նրանց կողմից գյուղացիներին նյութական մեծ վնասներ հասցնելը, ինչպես նաև ասքյարներ հավաքագրելու ընթացքում սպաների կողմից վերին աստիճանի կտրուկ միջոցների կիրառումը, հանգեցրին այն բանին, որ կատաղած բնակչության մի մասը պատրաստվում էր հարձակվել ամրոցի վրա, գրավել այն և զինաթափ անելով թուրքական ասքյարներին, վրեժ լուծել սպաներից» (**Սարգսյան,** 1964, 463): Բանը հասավ նրան, որ սպասվող գյուղացիական ելույթները կանխելու նպատակով Նուրի փաշան թուրքական զորքեր ուղարկեց Զաքաթալա՝ «կարգ ու կանոն հաստատելու համար» (**Սարգսյան**, 1964):

Մինչդեռ, Զաքաթալայի լեզգի ազգաբնակչությունը, այլևս չհանդուրժելով թուրքական հրամանատարության և Ադրբեջանի մուսավաթական իշխանությունների բարբարոսություններն ու բիրտ քաղաքականությունը, առավել հակված լինելով միանալու Լեռնականների Հանրապետությանը, դիմեց վճռական գործողությունների: Զաքաթալայում դեպքերի ընթացքին ուշադիր հետևող «Մշակ»-ի տեղեկացմամբ՝ Զաքաթալայի շրջանի ազգաբնակչությունը հիասթափված «...թիւրք բարբարոս կառավարութեան բերած «ազատութիւնից», ներկայիս մտորում է անջատվել Արդբէյջանի ոչ պակաս «ազատարար» հասարակապետութիւնից և միանալ Դաղստանի Հանրապետութեանը» (**Սոյզադէ**, 1918, № 253): Ավելին, օկրուգում հրավիրված մի շարք ժողովներում լեզգի ազգաբնակչությունը միաձայն որոշում է՝ շրջանը վերանվանել ««Ճար-բազար» հասարակապետութիւն... հեռու պահել իրանց թիւրքերի չար մտադրութիւնից, միանալ լեռնական ժողովուրդների հետ և հաշտ ու սիրով ապրել իրանց դրացի հայերի հետ: ...Այդ մտքին ինչպէս առաջ, նոյնպէս և այժմ ընդդէմ է մուղալ (իմա՛ կովկասյան թաթար – Գ. Ս.) ժողովուրդը, բայց յաղթութիւնը կը տանի լեզգի ազգաբնակութիւնն իր ճնշող մեծամասնութեամբ» (**Սոյզադէ**, 1918, N 253):

Ստեղծված իրավիճակում վրաց կառավարությունը նույնպես հակված չէր զիջումներ անել Ադրբեջանին և կտրականապես հրաժարվել էր

քննարկել այդ գավառների վերաենթարկման հարցը, գտնելով, որ Թիֆլիսի նահանգի ողջ տարածքը, մասնավորապես Զաքաթալայի օկրուգը, Ղարայազը և ողջ Բորչալուի գավառն անվիճելիորեն վրացական տարածք են (**Տէր Աստուծատրեանց**, 1917, N 151): Սուր պայքար ծավալվեց հատկապես մահմեդականներով բնակեցված Ղարայազի դաշտի համար, որը շուրջ վեց ամիս ռազմակալված վիճակում էր գտնվում «Վայրի դիվիզիայի» կողմից[41] (Միջադէպ Վրաստանի եւ Ադրբէյջանի միջեւ, 1918): Վրացական կառավարությունը 1918 թ. հուլիսի 20-ին վերջնագիր է ներկայացնում ադրբեջանական կողմին՝ 24 ժամվա ընթացքում Ղարայազից թաթարական զորամասերը դուրս բերելու պահանջով (Азербайджанская Демократическая Республика (1918–1920), б.д; Միջադէպ Վրաստանի եւ Ադրբէյջանի միջեւ, 1918): «Էրթոբա» թերթն այդ առիթով գրում էր. «Վրաց կառավարութիւնը չի զիջի նրան (իմա՛ Ադրբեջանին – Գ. Ս.) պատմական Վրաստանին պատկանող այն գաւառները, որոնք այժմ մահմեդականներով են բնակեցուած» (Կովկասի Հանրապետութիւնների փոխադարձ յարաբերութիւնները, 1918, N 192):

Միևույն ժամանակ, Մ. Է. Ռասուլզադեն, ամփոփելով Կ. Պոլսում բանակցությունների և քննարկումների առաջին արդյունքները, 1918 թ. սեպտեմբերի 18-ին արտգործնախարար Մ. Հաջինսկուն ուղարկած զեկուցագրում գրում էր. «Մեր քարտեզի համաձայն՝ Բորչալուով միջանցք է բացվում դեպի Թուրքիա: Բայց ներկայումս այդ տարածքը գտնվում է վրացիների ձեռքում: Եվ միևնույն ժամանակ, ըստ ադրբեջանական նախագծի, Ղազախի գավառի մի մասը թողնվում է հայերին: Մինչդեռ հայերին որոշակի տարածք տրամադրելը նշանակում է գրգռել նրանց ախորժակը: Լավ կլիներ, որ ադրբեջանական նախագծով ենթադրվող Բորչալուի և Թիֆլիսի սանջակների ամենակարևոր մասը փոխանցվեր վրացիներին, նրանց հետ կնքվեր դաշինք, և այդ դեպքում Ղազախը հայերին չի մնա: Ընդհակառակը, այդ դեպքում այստեղից Բորչալուի հարավային հատվածներ անցնելիս կբացվի Թուրքիայի համար ցանկալի միջանցք, և այդ ժամանակ Երևանի նահանգի հին սահմանը կհամընկնի Հայաստանի սահմանի հետ» (Азербайджанская Демократическая Республика (1918–1920), док. N 37, 58):

Այստեղից ակնհայտ է դառնում, որ ադրբեջանական պատվիրակությունը տարածքային հարցերը հօգուտ իրեն լուծելու մոլուցքով պատրաստ էր ստոր առևտրի մեջ մտնել վրացիների հետ, որն առաջին

[41] Passage – ֆրանսերեն՝ անցում:

հերթին ուղղված էր Հայաստանի դեմ: Նույն էր պնդում նաև օսմանյան խորհրդարանի փոխնախագահ և մամուլի ընկերության նախագահ Հուսեյին Ջահիդ բեյը, որն անդրադառնալով Օսմանյան պետության և Ադրբեջանի միջև կապի հաստատմանը, 1918 թ. սեպտեմբերի 18-ին ասել էր, թե «անպայման պետք է մի անցք (Passage)[42] թողնել Թիւրքիայից դեպի Ադրբեջան, որը կարելի է կամ Արաքսի հովտով կամ Բորչալուի վրայով» (**Խաչատրյան**, 2010, 26):

Այլ խոսքով՝ այդ տարածքները բուֆերի դեր պետք է ունենային Ադրբեջանական ԽՍՀ-ի և օսմանյան պետության միջև: Եվ այդ պլանը, ինչպես նկատել է պրոֆ. Կլիմ Դավիդովը, մտնում էր օսմանյան պետության հետ ուղիղ կապ ստեղծելու ադրբեջանական կողմի «մինիմում» ծրագրի մեջ:

Ադրբեջանի և Վրաստանի շահախնդիր ջանադրությունը Զաքաթալայի օկրուգի նկատմամբ շարունակվեց նաև 1919 թ. հունվարի 18-ին Փարիզում հրավիրված Խաղաղության Վեհաժողովում: Թե՛ ադրբեջանական, և թե՛ վրացական պատվիրակությունների՝ Փարիզում տպագրած և Վեհաժողովին ներկայացրած քարտեզներում Զաքաթալայի օկրուգը ներառված էր իրենց հավակնոտ տարածքների մեջ (**Барсегов**, 2008): Վրաստանի և Ադրբեջանի հանրապետությունների միջև սահմանային հարցի լուծումն ամրագրվեց 1919 թ. հունիսի 16-ին կնքված պայմանագրով[43], որի 4-րդ հոդվածում ասվում էր. «Պայմանաւորուող կողմերը կը պարտաւորուին՝ լուծել սահմանային բոլոր ընդհարումները, որ կրնան յառաջ գալ իրենց միջեւ՝ համաձայնութեամբ կամ արբիտրաժի միջոցով, որու բոլոր վճիռները պիտի ճանաչուին վերջնական եւ պարտադիր երկու կողմերու համար եւս» (Դաշնագիր Վրաստանի եւ Ադրբէջանի միջեւ, 1919, 374): Ընդսմին՝ պայմանավորվող կողմերը պարտավորվում էին բոլոր զինված ուժերով և միջոցներով համատեղ հանդես գալ ընդդեմ ամեն տեսակի հարձակման, որը սպառնում էր

[42] Ադրբեջանի կողմից ստորագրել են զինվորական նախարար Ահմեդ-բեկ Մեհմանդարովը, արտգործնախարար Մ. Ջաֆարովը, գլխավոր շտաբի պետ Ս. Սուլկևիչը, իսկ Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության անունից գեներալներ ռազմական խորհրդի անդամ Ի. Օդիշելիձեն, Զինվորական նախարարի օգնական Ա. Գեդևանովը (Գեդևանիշվիլի), արտգործնախարար Ե. Գեգեչկորին և ներքին գործերի ու ռազմական նախարար Ն. Ռամիշվիլին (Դաշնագիր Վրաստանի եւ Ադրբէջանի միջեւ; Адресъ-календарь Азербайджанской Республики на 1920-й г.; Համաձայնութիւն Վրաստանի եւ Ադրբէջանի միջեւ, 1919; Անգլ. Հանր. կարծիքը եւ Հայաստանի կացութիւնը, 1919; **Бахтадзе**, 2010):

[43] 1919 թ. սկզբներին օկրուգը վերակազմավորվել էր որպես նահանգ (Азербайджанская Демократическая Республика (1918-1920), б.д):

հիշատակված հանրապետություններից որևիցե մեկի անկախությանը կամ տարածքային անձեռնմխելիությանը (հոդված 1) (Դաշնագիր Վրաստանի եւ Ադրբէջանի միջեւ, 1919, 373): Բացի այդ, 1919 թ. հոկտեմբերի 25-նոյեմբերի 2-ը Ադրբեջանի, Վրաստանի, ինչպես նաև Զաքաթալայի օկրուգի ներկայացուցիչների մասնակցությամբ տեղի ունեցած քննարկումների արդյունքում երկկողմ հողօգտագործման համար որոշվել էր անցկացնել ժամանակավոր սահմանազատում (Азербайджанская Демократическая Республика (1918–1920), б.д):

Այս ամենին զուգահեռ՝ Ադրբեջանի կառավարությունը հետևողական աշխատանք էր իրականացնում նահանգապետության վերածված Զաքաթալայի օկրուգում իր վարչակարգի ամրացման ուղղությամբ: Նշենք, որ որքան էլ «Մուսավաթ»-ը ձգտում էր սեփական իշխանությունն օկրուգում ամրապնդել, այդուհանդերձ, իր բռնատիրական քաղաքականության հետևանքով 1919 թ. վերջերից կորցրեց ազդեցությունն ու հեղինակությունը. ամբողջ իշխանությունը գործնականում պատկանում էր թուրքամետ դիրքերում կանգնած «Ահրար»-ին (**Папуша**, **Гусейнов**, 1967; **Хапизов**, **Галбацев**, 2016): Միաժամանակ, որոշակի ազդեցություն էր ձեռք բերում նաև ավար Զաքարի Բալախլինսկու գլխավորությամբ գործող բոլշևիկյան կուսակցությունը (**Хапизов**, **Галбацев**, б.д): Ադրբեջանի բռնատիրական քաղաքականությունը լեզգի ազգաբնակչության շրջանում առաջացրեց լուրջ դժգոհություն: Ինչպես վերը նշեցինք, նրա զգալի մասը հանդես էր գալիս հայերի հետ հաշտ ու խաղաղ ապրելու ցանկությամբ: Միևնույն ժամանակ, «Մուսավաթ»-ի և «Ահրար»-ի միջև պայքարն էլ ավելի համառ բնույթ ստացավ: Վերջինս հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ադրբեջանի կառավարությունն այդպես էլ չի ցանկանում կատարել Զաքաթալայի նահանգին ինքնավարություն տալու խոստումը, 1920 թ. ապրիլի 15-ին Ասլան-բեկ Կարդաշևի միջոցով «Ահրար» խմբակցության անունից Ադրբեջանի խորհրդարանում հայտարարեց «Մուսավաթ»-ի հետ կոալիցիայից դուրս գալու և կառավարությունից իր ներկայացուցիչներին հետ կանչելու մասին (**Агамалиева**, 1998):

2. Զաքաթալայի օկրուգը Ադրբեջանական ԽՍՀ-ին բռնակցելու գործընթացքը

Քաղաքական իրադրությունը շրջադարձային փոփոխություններ կրեց Ադրբեջանում խորհրդային իշխանության հաստատումից հետո: 1920 թ. ապրիլի 29-ին Զաքաթալայում նույնպես կազմվում է հեղկոմ (**Хапизов**, **Галбацев,** б.д):

Ադրբեջանական ԽՍՀ-ն, շարունակելով մուսավաթականների անսանձ ծավալապաշտական քաղաքականությունը, արտգործժողկոմի տեղեկալ Մ. Դ. Հուսեյինովի անունից 1920 թ. մայիսի 3-ին Վրացական կառավարությանն ուղղեց հետևյալ վերջնագիրը. «Ադրբէջանի հանրապետութեան բանուորա-գիւղացիական իշխանութիւնը յայտարարում է բովանդակ աշխարհի բանուորների ու գիղացիների առաջ, որ ոչ մի թիզ հող չի զիջելու յանդուգն թշնամուն...» (Վրաց-ադրբէջանեան անհամաձայնութիւն, 1920, N 91):

Հարկ է նշել, որ Ադրբեջանական ԽՍՀ-ի ծավալապաշտական ձիգերը հատկապես հախուռն էին նախկին Թիֆլիսի նահանգի պատկառելի մի մասի՝ աշխարհագրական դիրքով և ռազմավարական առումով կարևոր նշանակություն ունեցող Բորչալուի, Ղարայազի, Ախալցխայի, Ախալքալաքի, Ալազան գետի ձախափնյակում ընկած Զաքաթալայի օկրուգի և Սղնախի գավառի նկատմամբ: Դեռ ավելին, խիստ ուշագրավ է նաև այն, որ ադրբեջանական հավակնությունները ձգվում էին ընդհուպ Կարսի և Բաթումի մարզեր (**Мустафаева**, 97):

Փաստերը վկայում են, որ այս հավակնություններով Ադրբեջանական ԽՍՀ-ն հետամուտ էր հետևյալ նպատակին. հեռանկարում Արցախ-Զանգեզուր-Նախիջևանի բռնակցմամբ Օսմանյան պետության հետ արտաքին կապ ստեղծելուց բացի, օգտագործելով Վրաստանի՝ Կասպից և Սև ծովի ավազանների միջև տարանցիկ երկիր լինելու իրողությունը, վերոհիշյալ տարածքների բռնազավթման միջոցով նույնպես անցուղի ունենալ դեպի Սև ծով և Օսմանյան պետություն: Այսպիսով, Ադրբեջանական ԽՍՀ-ը աշխարհաքաղաքական և տնտեսական շահերի թելադրանքով փորձում էր գավթել Հայաստանի հարավային հատվածը, ծայր հյուսիս-արևմուտքով դուրս գալ դեպի Աղբաբա (Ամասիայի շրջան) և Ծովակն (Զլդր) լիճ ու ընդհանուր սահման ունենալ Օսմանյան պետության հետ: Ըստ էության, համաթյուրքական ուրվագծված սցենարով, Հայաստանը օղակվում էր հարավից և հյուսիսից և հայտնվելու էր լինել-չլինելու վտանգի առջև: Ռ. Տեր-Մինասյանը,

փաստական հիմքով հանգամանորեն վերլուծելով Ադրբեջանական ԽՍՀ-ի զավթողական ծրագրերի հեռահար նպատակները, գրում էր. «...Հայաստանի հիւսիսից նա (իմա՛ Ադրբեջանը – Գ. Ս.) պիտի միանար Աղբաբա եւ Զըլտըր իսլամներով բնակուած երկրամասերին եւ այդպիսով, պիտի կապուէր Կարսի նահանգի եւ Տաճկաստանի հետ: ...անոր իրագործումը բոլորովին պիտի խեղդէր Հայաստանը, նրան օղակելով իսլամական շղթայով մը. Հայաստանը պիտի դառնար մի փոքրիկ կղզեակ՝ սեղմուած ամէն կողմից թաթար եւ թուրք զինակիցներով» (**Ռուբէն**, 181):

Ակներև է, որ Ադրբեջանական ԽՍՀ-ն ամբողջովին որդեգրել էր մուսավաթականների կառավարման շրջանում մշակված «Մեծ Ադրբեջան»-ի համաթյուրքական ծրագիրը: Այստեղ կարևոր է նաև շեշտել, որ Ադրբեջանի ծավալապաշտական ջղաձգումներում հատկապես առաջնային տեղ էր զբաղեցնում Զաքաթալայի օկրուգը[44], որը յուրովի բանալու դեր էր կատարում վերոհիշյալ տարածքներ ներթափանցելու համար: Ռազմավարական այդ ծրագրի առանձին կողմերը պարզելու համար հետաքրքրություն է ներկայացնում տարածաշրջանային անվտանգության հարցերով զբաղվող թուրք փորձագետ Հարուն Ցըլմազի «Անսպասելի խաղաղություն. ադրբեջանա-վրացական հարաբերություններ. 1918–20 թթ.» հոդվածը: Խոստովանելով Ադրբեջանական ԽՍՀ-ի՝ Զաքաթալայի նկատմամբ ունեցած նկրտումների իրական նպատակները, նա գրում է. «Եթե քննենք ադրբեջանական պնդումները, ապա ժողովրդագրական հիմնավորման հետևում կար նաև թաքնված օրակարգ: Բաքվի կառավարությունը հույս ուներ ստեղծել տարածաշրջանների շղթա՝ որպես միջանցք դեպի Թուրքիա և Բաթումով ելք ստանալ դեպի Սև ծով» (**Yilmaz**, 2009, 41):

Ստեղծված իրավիճակի շուրջ օրախնդիր հրապարակումներից հիշարժան է հատկապես հասարակական-քաղաքական գործիչ Պողոս Աբելյանի՝ «Հայ-վրացական դաշնակցութեան անհրաժեշտութիւնը»

[44] Ի դեպ, Պ. Աբելյանի կանխազգացումներն իրականացան, երբ Ադրբեջանի ԳԱ պատմության ինստիտուտի նախկին տնօրեն, վայ-ակադեմիկոս Յա. Մախմուդովը "Report.az" լրատվական գործակալությանը 2019 թ. հուլիսի 22-ին տված հարցազրույցում ծավալապաշտի հռետորաբանությամբ հայտարարեց թե, իբր, «Թբիլիսին հին ադրբեջանական քաղաք է» (https://report.az/ru/vneshnyaya-politika/yagub-mahmudov-za-provokaciyami-na-keshikchidag-stoit-armyanskoe-lobbi/):Մախմուդովի զեղծարարություններին հակադարձեց Թբիլիսիի պետական համալսարանի պատմության և ազգագրության ինստիտուտի տնօրեն Գիորգի ձեիշվիլին, իրավացիորեն անմիտ համարելով կեղծարարի այս և նմանաբնույթ հայտարարությունները (**Чеишвили**, б.д):

հոդվածը: Ներկայացնելով այն նպատակները, որոնք իրենց առջև դրել էին համասիլամական և համաթյուրքական քողարկված գաղափարներով առաջնորդվող Ադրբեջանի բոլշևիկ ղեկավարները, հեղինակը գրում էր. «Պանթիւրքիզմի վտանգը բաւականաչափ պարզ չեն պատկերացնում հայ և վրացի քաղաքական շրջանները: Ժամանակն է հասկանալու, որ վրացի ժողովրդին այս օրին գցողը եղել է մեր նոյն ընդհանուր թշնամին – պանսիլամիզմը և պանթիւրքիզմը: Վերջապէս՝ պէտք է տեսնել, թէ ի՞նչ գծերով է գնում պանթիւրքական ցեղերի միացումը, –չպէտք է լինի ոչ միայն Հայաստան, այլև չպէտք է լինեն Մեսխէթիա, Ջաւախէթիա, Բաթում, Բորչալու, հաւանօրէն և ողջ Վրաստան, որը պէտք է եթէ ոչ այսօր, գոնէ վաղը խանգարէ ժողովուրդների արիւն թափելուն սովոր պանիսլամիստներին և պանթիւրքիստներին: ...Հայութեան հետ հաշիւ տեսնելուց յետոյ հերթը կը գայ վրացիներին...» (**Արէլեան**, 1920, N 13): Հոդվածագիրը ընդհանուր վտանգի դեմ գործակցության կոչով դիմելով հայերին և վրացիներին, ազդարարում էր. «...հայ-վրացական դաշնակցութիւնը անհրաժեշտութիւն է, իսկ վրաց-ադրբէջանեանը՝ խաբեբայութիւն մէկի կողմից, –Ադրբէջանի կողմից...» (**Արէլեան**, 1920, N 13)[45]:

Մինչ Ադրբեջանի և Վրաստանի միջև սահմանավեճերի առիթով լարվածությունն ավելի էր խորանում. 1920 թվականի մայիսի 7-ին ՌՍԴԽՀ-ը Վրաստանի հետ կնքեց Մոսկվայի համաձայնագիրը, որի 4-րդ հոդվածի համաձայն՝ Թիֆլիսի, Քութայիսի նահանգները՝ իրենց գավառներով, Բաթումի մարզը, ինչպես նաև Զաքաթալայի և Սուխումի օկրուգները ճանաչվեցին Վրաստանի Հանրապետության տարածք (հոդված 4)՝ Վրաստանի կառավարության կողմից Վրաստանի կոմունիստական կուսակցության գործունեությունը չխոչընդոտելու դիմաց (հոդված 10) (Сборник действующих договоров, 1922; **Гамахария**, **Гогия**, б.д): Համաձայնագրում վրացական կողմի պնդմամբ ներառվեցին կետեր ՌՍԴԽՀ-ի կողմից Զաքաթալայից բացի, Լոռու և Ախալքալաքի նկատմամբ Վրաստանի իրավունքները ճանաչելու մասին: Այս առիթով Հայաստանի Հանրապետության վարչապետ Հ. Օհանջանյանը բողոքի հեռագիր հղեց ՌՍԴԽՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինին՝ հայտնելով, որ Լոռին ու Ախալքալաքը Վրաստանի մաս դիտելով, վրացական իշխանությունները խախտում են 1919 թ. հունվարի 17-ին ձեռք բերված հայ-վրացական համաձայնագիրը՝ այդ տարածքները վիճելի համարելու

[45] Դաշնագրի ամբողջական տեքստը տե՛ս (Հաշտութեան պայմանագիրը, 1920):

վերաբերյալ (Ռուս-վրացական համաձայնութեան առթիւ, 1920, N 57): Ահա թե որքան հակասական է եղել բոլշևիկյան Մոսկվայի քաղաքականությունը:

Զաքաթալայի շուրջ տեղի ունեցող իրադարձություններին զուգընթաց, ՌՍԴԽՀ-ն ձեռնամուխ էր եղել ինչպես Հայաստանի, այնպես էլ Վրաստանի խորհրդայնացման գործընթացին: Եվ քանի որ Ադրբեջանում խորհրդային իշխանություն հաստատվելուց հետո Մոսկվան այն վերածել էր Այսրկովկասի խորհրդայնացման հենակետի, Ադրբեջանական ԽՍՀ-ի ղեկավարությունը, հմտորեն օգտվելով իրեն վերապահված այդ կարգավիճակից, արտաքուստ հենվելով ՌՍԴԽՀ-ի շահերի վրա, ի հատուցումն առաջ էր մղում իր տարածքային-ծավալապաշտական հավակնությունները: Եվ ինչպես միշտ, արտաքին քաղաքական որևէ խնդրի դեպքում Ադրբեջանը հնարամտորեն օգտագործում էր իր աշխարհաքաղաքական առավելությունները և Բաքվի նավթի նկատմամբ ազդեցիկ պետությունների, տվյալ դեպքում՝ ՌՍԴԽՀ-ի շահագրգռվածությունը՝ նրա միջոցով Հայաստանի և Վրաստանի վրա ճնշումներ գործադրելու և նրանց զիջումներ պարտադրելու համար: Այդ էր փաստում հենց ՌԿ(բ)Կ Կենտկոմի Հյուսիս-կովկասյան բյուրոյի նախագահ Ս. Օրջոնիկիձեն, ասելով. «Այն պահից, երբ Խորհրդային իշխանությունը հաստատվեց Ադրբեջանում, այն դարձավ մեր ելման կետը, որտեղից մենք գրոհում էինք մենշևիկ-դաշնակցական ազգային-բուրժուական-հակահեղափոխական կառավարությունների դեմ» (История Азербайджана, 1963, 262): Ասել կուզի, ՌՍԴԽՀ-ը հասկանում էր, որ ստեղծել էր մի պետական կազմավորում, որ դառնալու էր տարածաշրջանի ոստիկանը, և Մոսկվան Բաքվի միջոցով կարողանալու էր ներազդել Վրաստանի և Հայաստանի վրա:

Ստեղծված իրավիճակում շուտով իրադրությունն առավել նպաստավոր դարձավ՝ հօգուտ Ադրբեջանական ԽՍՀ-ի: Բազմաթիվ փաստեր վկայում են, որ Զաքաթալայի հարցը ի շահ Ադրբեջանական ԽՍՀ-ի լուծելու եռանդուն կողմնակից էր Ադրբեջանում խորհրդային կարգեր հաստատվելուց անմիջապես հետո՝ 1920 թ. ապրիլի 30-ին Բաքու մեկնած Ս. Օրջոնիկիձեն (**Орджоникидзе**, 1986): Հետաքրքրությունից զուրկ չէ այն հանգամանքը, որ միջնորդի դեր ստանձնած նրա գործունեությունն ընդհանրապես աչքի էր ընկնում ընդգծված ադրբեջանամետ գործելակերպով: Վերջինս տարածքային վեճերի հարցում, ինչպես հայ-ադրբեջանական խնդրում, այս դեպքում ևս հետևողականորեն պաշտպանելով Ադրբեջանական ԽՍՀ-ին, 1920 թ. մայիսի 10-ին իր և Կովկաս-

յան ռազմաճակատի ՌՀԽ անդամ Իվար Սմիլգայի ու 11-րդ Կարմիր բանակի Ռազմխորհրդի անդամ Սերգեյ Կիրովի ստորագրությամբ շտապ հեռագիր է հղում Վ. Լենինին՝ պնդելով, թե, իբր, ելնելով «ազգագրական նկատառումներից», Զաքաթալայի օկրուգի հարցը միանշանակ պետք է լուծել հօգուտ Ադրբեջանական ԽՍՀ-ի (**Квашонкин**, 1997): Ավելին, Լենինին ուղարկած հեռագիրը նույնիսկ շանտաժի բնույթ էր կրում, երբ հարցի լուծումը շաղկապվում էր նավթի գործոնի հետ: Հեռագրում Օրջոնիկիձեն պնդելով Զաքաթալայի օկրուգի ադրբեջանական պատկանելությունը, գրում էր. «...Վրաստանն այսօր հարձակման է անցել Զաքաթալայի օկրուգում [...] Մեր կողմից այս բռնագրավման ճանաչումը Ադրբեջանում խորհրդային իշխանության ավարտի սկիզբն է, որը հարյուրապատիկ ավելի կարևոր է, քան Վրաստանը: Բացատրեցեք. ինչո՞վ է պայմանավորված Ադրբեջանի հանդեպ նման վերաբերմունքը, որն ունի հարյուր անգամ ավելի մեծ նշանակություն, քան Վրաստանը: Ձեր առջև դրված է հետևյալ հարցը. կամ վերանայեք Վրաստանի հետ կապված հարցը, կամ մեզ հետ կանչեք, քանի որ մենք մտադիր չենք վճարել կովկասյան հարցերում արտգործժողկոմատի անտեղյակության համար: ...մեզ մինչև կոկորդ նավթ է պետք...» (**Квашонкин**, 1997, 171): Օրջոնիկիձեն նման պահանջը հիմնավորում էր նաև մենշևիկյան Վրաստանի վրա ճնշում բանեցնելու և խորհրդայնացումն արագացնելու նկատառումով:

Զաքաթալայի օկրուգի պատկանելության հարցը լուծելու նպատակով ՌՍԴԽՀ-ն և Վրաստանը, նախապես ստանալով Ադրբեջանական ԽՍՀ-ի համաձայնությունը, 1920 թ. մայիսի 7-ի Մոսկվայի համաձայնագրի հիման վրա մայիսի 12-ին կնքում են լրացուցիչ համաձայնագիր, որի 1-ին հոդվածում ասվում էր՝ «Վրաստանի և Ադրբեջանի միջև սահմանային վիճելի տարածքների հարցը լուծելու նպատակով Զաքաթալայի օկրուգի համար Ադրբեջանի և Վրաստանի կառավարությունների ներկայացուցիչներից ստեղծվում է հավասար թվով կազմված խառը հանձնաժողով՝ ՌՍԴԽՀ ներկայացուցչի նախագահությամբ: Հանձնաժողովի բոլոր որոշումները պարտադիր կլինեն և կճանաչվեն Ադրբեջանի և Վրաստանի կառավարությունների կողմից» (Сборник действующих договоров, 34; **Беридзе**, **Иовидзе**, **Маглакелидзе**... (отв. ред. **Хачапуридзе**), 1958): Հանձնաժողովի նախագահ էր նշանակվել Պոլիկարպ (Բուդու) Մդիվանին (**Квашонкин**, ճ.դ): Սակայն պետք է նկատի ունենալ, որ կնքված համաձայնագիրն այդպես էլ չկիրառվեց և չհստակեցվեցին Վրաստանի սահմանները: Ըստ էության, ռուս-վրացական պայմանագիրը չէր էլ կարող լինել Վրաս-

տանի անվտանգության երաշխիք: Ակնհայտ էր, որ այն ժամանակավոր բնույթ էր կրում: Հենց վրաց պատմաբանների կարծիքով, թեև Խորհրդային Ռուսաստանն այդ պայմանագրով de jure ճանաչեց Վրաստանը, բայց այդ ճանաչումն էլ ձևական էր:

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ Մոսկվան համաձայնագիրը կնքել էր մարտավարական նկատառումներով՝ Վրաստանի հետ հարաբերությունները կարգավորելու, հընթացս այնտեղ խորհրդային կարգեր հաստատելու նպատակով: Հասկանալի է, որ այդ ամենը կատարվում էր Վ. Լենինի ընդհանուր ղեկավարությամբ՝ ՌԿ(բ)Կ Կենտկոմի ցուցումներով:

Նկատենք, որ ՌԿ(բ)Կ Կենտկոմը Վրաստանի հետ վարում էր խիստ զգուշավոր քաղաքականություն. վերջինիս հետ չափազանց լավ հարաբերությունները կարող էին վնասել խորհրդային քաղաքականությանն Ադրբեջանում: Ուստի հավասարակշռությունը չխախտելու համար ՌԿ(բ)Կ Կենտկոմն այդքան էլ հակված չէր Վրաստանում խորհրդային իշխանության արագ հռչակմանը, ինչին ձգտում էր Ս. Օրջոնիկիձեն (**Хармандарян**, б.д): Այդ իսկ պատճառով ՌՍԴԽՀ արտգործժողկոմատը Լ. Կարախանի միջոցով հրահանգել էր Ս. Օրջոնիկիձեին զսպել տեղական կոմունիստների գործունեությունը և հետևել խորհրդա-թուրքական հարաբերությունների զարգացմանը, քանի որ «մահմեդականները սխալ կգնահատեն խաղաղությունը քրիստոնյա պետությունների հետ» (**Амбарцумян**, 2021, 127): Ըստ էության, Թիֆլիսը դարձել էր Այսրկովկասում ինչպես էթնիկ, այնպես էլ քաղաքական հավասարակշռության պահպանման կենտրոն:

Միևնույն ժամանակ դեպքերի հետագա ընթացքը ցույց տվեց, որ Մոսկվայի համաձայնագիրը զսպիչ դեր չունեցավ ադրբեջանա-վրացական ռազմական գործողությունների կանխման համար: Ընդհակառակը, թեև վերջիններիս միջև 1919 թ. հունիսի 16-ին կնքվել էր ռազմաքաղաքական համաձայնագիր, իսկ Մոսկվայի համաձայնագրի հիման վրա ՌՍԴԽՀ-ի և Վրաստանի միջև մայիսի 12-ին կնքված լրացուցիչ համաձայնագրի 2-րդ հոդվածով նախատեսվում էր. «Նախքան հանձնաժողովի վճռի կայացմանը, ինչը նախատեսված է սույն համաձայնագրի 1-ին հոդվածով, Վրաստանը և Ադրբեջանը Զաքաթալայի շրջան չեն մտցնի նոր զորքեր, բացառությամբ այն զորքերի, որոնք այնտեղ առկա են սույն լրացուցիչ համաձայնագրի ստորագրման պահին» (Сборник действующих договоров, 34):

Այդուհանդերձ, 1920 թ. մայիսի 9-ից եռուն մարտեր սկսվեցին Զաքաթալայի շրջանում: Զինադադար հաստատվեց միայն մայիսի 18-ին

(**Рахманзаде**, 2009): Սակայն ադրբեջանական կողմը զինադադարից հետո չհրաժարվեց իր ծավալապաշտական հավակնություններից և դավադիր գործելաոճով Ս. Օրջոնիկիձեի հովանու ներքո դիմեց նոր խարդավանքների: Վրաստանի և Ադրբեջանի միջև սահմանային և տարածքային հարցերի շուրջ ընթացած երկարատև բանակցություններից հետո 1920 թ. հունիսի 12-ին Աղստաֆայում կնքվեց «հաշտության և բարեկամության» համաձայնագիր: Վրացական կողմից այն ստորագրեց պաշտպանության նախարար Գրիգոլ Լորդքիփանիձեն, ադրբեջանական կողմից՝ արտգործնակոմ Մ. Դ. Հուսեյինովը (Հաշտութիւն Վրաստանի եւ Ադրբէջանի միջեւ. 1920): Համաձայնագրի 1-ին հոդվածում ասվում էր. «Ադրբէջանի խորհրդային սոցիալիստական և Վրաստանի դեմոկրատիկ հանրապետութիւնների միջև անմիջապէս դադարեցւում են պատերազմական գործողութիւնները և հաստատուն ու բարեկամական հաշտութիւն է կնքւում» (Հաշտութեան պայմանագիրը, 1920, N 31): 6-րդ հոդվածը վերաբերում էր Զաքաթալայի օկրուգին: Ըստ այսմ՝ «Զաքաթալայի օկրուգի հարցը հանձնվում էր իրավարարական հանձնաժողովին, որը նախատեսված է 1920 թ. մայիսի 12-ին ՌՍԴԽՀ-ի և Վրաստանի Դեմոկրատական Հանրապետության միջև կնքված լրացուցիչ համաձայնագրով: Մինչև իրավարարական հանձնաժողովում այս հարցի լուծումը, պայմանավորվող կողմերից ոչ մեկն իրավունք չուներ նոր զորամասեր մտցնել Զաքաթալայի օկրուգ» (**Վ.Հ.Գ.** [**Վրաստանի հեռագրական գործակալություն**], 1920): Հաշտության կնքումից հետո Վրաստանի սահմաններ ներխուժած ադրբեջանական զորքերը պետք է թողնեին երկրի սահմանները և Գանձակում զինաթափվելուց հետո տեղափոխվեին Բաքու (Ադրբէջանեան զօրամասերի զինաթափումը, 1920):

Սակայն այս համաձայնագիրը թղթի վրա մնաց և Վրաստանին երբեմնի «բարեկամ պետություն» համարող Ադրբեջանն առավել բացահայտորեն ի ցույց դրեց իր ագրեսիվ նպատակները: Վրաստանի ղեկավար շրջանակները և կառավարությունը փորձեցին հակազդել Ադրբեջանի նկրտումներին: «Նոր Աշխատաւոր» օրաթերթը, հետևելով Զաքաթալայի շուրջ տեղի ունեցող իրադարձություններին, Վրաստանի «Սոցիալիստ-ֆեդերալիստներ» կուսակցության «Սախալխո Սաքմե» պաշտոնաթերթի 836 համարից արտատպեց ստորև բերվող հոդվածը, որում մասնավորապես ասվում էր. «Ադրբէջանի նոր կառավարիչները փորձեցին դաւաճանօրէն խաբելու Վրաստանին: Նրանք մեզ այն ժամանակ հրամցրին ժամանակաւոր հաշտութիւն, երբ վատ դրութեան մեջ էին, երբ մեր յաղթանակող զօրքերը քշում էին թշնա-

միներին: Իսկ յետոյ, երբ զինուորական գործողութիւնները կանգ առան՝ այնպիսի յանդուգն պահանջներ ներկայացրին մեզ, որոնց ի կատար ածելը մեզ էապես դնում էր պարտուածի դրութեան մէջ: ...կայ նաեւ մի հարց, որ համարեա թէ մոռացուած էր այս վերջին ժամանակներս: Մոռացուած էր այն պատճառով, որ մենք ենթադրում էինք, թէ Արևելքում մենք մի բարեկամ պետութիւն ունենք: Այժմ այնտեղ մենք ունենք մի թէև կարմիր գոյնով ներկուած, բայց սև սիրտ կրող դրացի, որը բոլորովին առանց պատճառի կամենում էր մեզ ոտնատակ տալ...: ... Մեր խօսքը Զաքաթալայի շրջանի մասին է: ...Վրաստանը երբէք չի հաշտուի, որ Կախէթի դուռ Զաքաթալան թշնամու ձեռքում լինի: ...Ուստի մենք ասում ենք, որ Զաքաթալայի շրջանը պէտք է Վրաստանին պատկանէ, քանի որ նա աշխարհագրապէս, պատմականապէս ու բնակիչների աւանդութիւնների տեսակէտից Վրաստանին է պատկանում» (Վրաց կեանք, 1920, N 45):

1920 թ. հունիսի 14-ին Մոսկվայից Վրաստան ժամանած ՌՍԴԽՀ դիվանագիտական ներկայացուցիչ Սերգեյ Կիրովի հետ հանդիպմանը Վրաստանի արտգործնախարար Եվգենի Գեգեչկորին տեղեկացնում էր, որ խախտելով վրաց-ադրբեջանական հաշտության պայմանագիրը, շրջանի տարածքը ռազմակալվել է Խորհրդային Ադրբեջանի զորքերի կողմից (**Квашонкин**, 176): Ադրբեջանական ԽՍՀ-ի ծավալապաշտական, բռնատիրական ու կամայական քաղաքականության պատճառով լեզգի ազգաբնակչության շրջանում կարճ ժամանակ անց բռնկվեց ապստամբություն: Ապստամբության նախօրեին համաձայնություն էր կայացվել ապստամբների և վրաց իշխանության միջև, առ այն, որ Զաքաթալայի օկրուգը լայն ինքնավարությամբ պետք է մտներ Վրաստանի Հանրապետության կազմի մեջ (**Рахманзаде**, 2009): Ասլան-բեկ Կարդաշևի գլխավորությամբ բոլշևիկների դեմ զինված ապստամբությունը բռնկվեց 1920 թ. հունիսի 19-ին (ն. տ.)՝ Թալա գյուղից, որն արագորեն տարածվեց օկրուգի մյուս վայրերում: Լեզգիները Զաքաթալայում բանտարկում են տեղի բոլշևիկ ղեկավարներից մի քանիսին (**Хапизов**, **Галбацев**, 2016): «Մշակ»-ը «Վերջին լուրեր» խորագրի տակ տեղեկություններ հաղորդելով լեզգիների բարձրացրած ապստամբության մասին, գրում էր. «Սրանք այն լեզգիներն են, որոնք 1918 թ. անհամբեր սպասում էին, թէ թուրքերը երբ պիտի մտնեն Զաքաթալայի շրջանը և իրենց իշխանութիւնը հաստատեն այնտեղ» (Վերջին լուրեր: Զաքաթալայի յեղաշրջումը, 1920, N 44): Ապստամբներին հաջողվում է գրավել Զաքաթալայի բերդը (История Азербайджана, б.д): Ելնելով ստեղծված

վիճակից, Ադրբեջանի բոլշևիկյան զորքը հետ է քաշվում Նուխի: Զորքի հետ քաշվելու ժամանակ, տեղի կովկասյան թաթարներն ու լեզգիները զինաթափ անելու նպատակով հարձակվում են զինվորների վրա: Նուխիի գավառի սահմանին, Կախ ավանի մոտ 3–4 օր տեղի ունեցած կռիվներում ադրբեջանական զորքն ունենում է մեծաթիվ կորուստներ: Բոլշևիկյան զորքի հետ հեռանում են նաև Զաքաթալայի և Կախ ավանի հայերը, ռուսներն ու ինղիլոյները (Վերջին լուրեր: Զաքաթալայի յեղաշրջումը, 1920): Հետագա դեպքերը զարգացան այնպես, որ Զաքաթալայի օկրուգի լեզգիներն Ասլան-բեկ Կարդաշևի գլխավորությամբ մի պատվիրակություն ուղարկեցին Թիֆլիս «...խնդրելու Վրաստանի կառավարութեանը, որպէսզի նա գրաւէ Զաքաթալայի շրջանը, որովհետև վախենում են բոլշևիկների վրէժխնդրութիւնից» (Վերջին լուրեր: Զաքաթալայի յեղաշրջումը, 1920): Պատվիրակության՝ Վրաստանի կառավարությանը ներկայացված դիմումում ասվում էր. «Զաքաթալայի շրջանը, որը երբևէ չի եղել Ադրբեջանի կազմում, տիրող հանգամանքների բերումով, ստիպված է եղել միանալու վերջինիս՝ 1918 թ. հունիսի 28-ի օկրուգի բնակիչների համագումարի որոշման հիման վրա, այն պայմաններով, որոնք պետք է երաշխավորեին օկրուգի ինքնավար իրավունքները: Չնայած այն հանգամանքին, որ Խան Խոյսկու այն ժամանակվա կառավարությունը հեռագրով տեղեկացրեց մեզ նշված պայմաններով օկրուգը Ադրբեջանին միացնելու մասին, այսուհանդերձ, երկու տարի շարունակ որևէ մտադրություն չի դրսևորվել՝ կատարելու 1918 թ. հունիսի 28-ով սահմանված արձանագրության պայմանները: Ի հավելումն այս հանգամանքի, Զաքաթալայի օկրուգի ողջ բնակչության համար այս երկու տարվա ընթացքում միանշանակ պարզ դարձավ, որ Վրաստանի հետ սերտորեն կապված օկրուգի պետական և տնտեսական գոյությունը անկասկած վտանգի տակ է, եթե օկրուգը շարունակի մնալ Ադրբեջանի կազմում» (**Хапизов**, **Галбацев**, с. 182): Թեև Վրաստանի կառավարության և ապստամբական ուժերի ղեկավարության միջև կնքվեց 8 կետից բաղկացած համաձայնագիր, ըստ որի «Օկրուգը պետք է կառավարվեր նույն սկզբունքներով, ինչ Վրաստանը» (**Хапизов**, **Галбацев**, 196), սակայն, վրացական կառավարությունը չդիմեց վճռական գործողությունների (**Рахманзаде**, б.д) Հետագա ռազմաքաղաքական իրադարձությունները զարգացան Վրաստանի համար անբարենպաստ պայմաններում, ինչի հետևանքով Զաքաթալայի օկրուգն այդպես էլ չմնաց նրա կազմում: Ադրբեջանական ԽՍՀ-ը, ՌՍԴԽՀ-ի, հատկապես Ս. Օրջոնիկիձեի կողմից աննախադեպ դիվանագիտական ճնշման պայմաններում, Զաքաթալան բռնա-

կցելու նպատակով խախտելով 1920 թ. մայիսի 7-ի Մոսկվայի համաձայնագրի հիման վրա մայիսի 12-ին կնքված լրացուցիչ համաձայնագրի 2-րդ հոդվածից բխող պայմանավորվածություններն, առ այն, որ Վրաստանն ու Ադրբեջանը «նոր զորքեր չպետք է մտցնեին Զաքաթալայի օկրուգ» (Сборник действующих договоров, соглашений и конвенций заключенных Р.С.Ф.С.Р. с иностранными государствами, б.д; Борьба за победу Советской власти в Грузии, б.д), Ադրբեջանը ռազմակալեց այն (Գեգեչկորու նոտան, 1920; **Хапизов**, **Галбацев**, 2016): Ս. Օրջոնիկիձենի՝ Գ. Չիչերինին 1920 թ. հունիսի 19-ին ուղարկած հեռագրում ասվում էր «Հաշվի առնելով հակահեղափոխական հեղաշրջումը՝ Զաքաթալայի օկրուգ զորք մտցնելը անխուսափելի է դառնում» (ред. **Гулиева**, 1989, 36): 1920 թ. հունիսի 20-ին 11-րդ Կարմիր բանակը Բաքվից ներխուժելով Զաքաթալա, դաժանորեն ճնշում է ապստամբությունը (История Азербайджана, б.д; **Хапизов**, **Галбацев,** б.д): Ի դեպ, ապստամբության ճնշման ժամանակ առանձնակի դաժանությամբ աչքի է ընկել Մ. Զ. Բաղիրովը (**Хапизов**, **Галбацев**, 2016): Ընդհանուր առմամբ 1920 թ. մայիսից օկրուգում տեղակայված էր 11-րդ Կարմիր բանակի 7-րդ դիվիզիան, ապա՝ 59-րդ բրիգադը:

Զաքաթալայի ռազմակալման առիթով Ե. Գեգեչկորին 1920 թ. հունիսի 24-ին բողոքի նոտա հղեց ՌՍԴԽՀ արտգործժողկոմ Գ. Չիչերինին՝ պատճենը՝ Ադրբեջանական ԽՍՀ-ի արտգործժողկոմ Մ. Դ. Հուսեյինովին, հայտնելով, որ «Այդ գործողութիւնները խախտում են կնքած հաշտութիւնը և հնարաւորութիւն չեն տալիս հաւատալու Ադրբէջանի կառավարութեան յայտարարութիւններին, կարևոր եմ համարում, յայտնել, նոյնպէս, որ Զաքաթալայի շրջանում փորձեր են կատարւում ազգաբնակութեան վրայ, բռնութիւններ են գործադրւում, որի պատճառով ազգաբնակութիւնը փախչում է լեռները»: Հաշվի առնելով վերանշյալը, նոտայում պահանջվում էր «Զաքաթալայի շրջանից ադրբեջանական զորքերի անհապաղ դուրսբերումը» (Գեգեչկորու նոտան, 1920):

Ադրբեջանի Ռազմհեղկոմը, Զաքաթալայի բռնակցումն «օրինականացնելու» համար խախտելով Աղստաֆայի համաձայնագիրը, Ն. Նարիմանովի գլխավորությամբ 1920 թ. հունիսի 28-ին հապճեպ ընդունեց Ադրբեջանական ԽՍՀ-ի սահմանների վերաբերյալ դեկրետ, համաձայն որի՝ Զաքաթալայի օկրուգը և Նուխիի շրջանը (վերջինիս մեջ ընդգրկվում էր Գանձակ-Ելիզավետպոլի նահանգի Նուխիի գավառը) ապօրինաբար մտցվեցին Ադրբեջանական ԽՍՀ-ի կազմի մեջ (ред. **Пашаев**, 1988): Այդ նպատակով Ադրբեջանական ԽՍՀ-ը Զաքաթալա-

յում կրկին մեծաթիվ զորք կենտրոնացրեց: Ադրբեջանական ԽՍՀ-ի այս միտումներն է՛լ ավելի ակներև դարձրին, որ 1920 թ. մայիսի 7-ին ՌՍԴԽՀ-ի և Վրաստանի միջև կնքված համաձայնագիրը, թեկուզև Զաքաթալայի հարցում, լոկ անվանական բնույթ էր կրում: Հարցին անդրադարձած հեղինակներից պ.գ.թ., դոց. Ելենա Արխիպովայի իրավացի եզրահանգմամբ. «Խորհրդային իշխանության կողմից Զաքաթալայի շրջանի հանձնումը Վրաստանին ժամանակավոր և նույնիսկ անվանական զիջում էր, մի տեսակ փոխհատուցում, որը պայմանավորված էր ռազմավարական հաշվարկներով: Կարելի է ենթադրել, որ տարածքի վերաենթարկում այդպես էլ տեղի չունեցավ, և գործը սահմանափակվեց խորհրդային կողմի՝ վրացական կողմի հետ հարաբերությունները բարելավելու մտադրությունների հռչակագրով» (**Архипова Е**., 2014, 120):

Երկար սպասել չտվեց նաև Վրաստանի կառավարության արձագանքը: Արտգործնախարար Կ. Սաբախտարաշվիլին 1920 թ. դեկտեմբերի 24-ին բողոքի նոտա հղեց նաև Վրաստանում ՌՍԴԽՀ դիվանագիտական ներկայացուցիչ Ս. Կիրովին: Նոտայում ասվում էր. «Մայիսի 7-ին կապուած պայմանագրի IV-րդ յօդ.[ուածի] 1-ին կէտի ոյժով Ռուսաստանը պարտաւորուեց ճանաչել Վրաստանի պետութեան կազմի մէջ մտնող ի թիւս այլ վայրերի նաև Զաքաթալայի գաւառակը: ...Մինչդեռ մեր ունեցած տեղեկութիւնների համաձայն, Զաքաթալայի գաւառակի սահմաններում, ի խախտումն վերոյիշեալ պայմանագրերի, շարունակ կենտրոնանում են Խորհրդային զօրքերը, իսկ ազգաբնակչութիւնից պահանջուած է մատակարարել մինչև յունուարի 1-ը մեծ քանակութեամբ մթերք, կեր և անասուն: ...Ի նկատի ունենալով այդ, յայտնելով վճռական բողոք վերոյիշեալ պայմանագիրը խախտելու դէմ...» (**Վ.Հ.Գ**. [**Վրաստանի հեռագրական գործակալություն**], 1920, N 169):

Սակայն անտեսելով Աղստաֆայի հունիսի 12-ի և մայիսի 7-ի պայմանագրերը, 1921 թ. սկզբների դրությամբ Ադրբեջանական ԽՍՀ-ի զորքերը տակավին շարունակում էին մնալ Զաքաթալայում (Արտաքին գործերի ժող. կոմիսար Հուսեյնովի պատասխանը Սաբախտարաշվիլիին, 1921, N 3): Ավելին, Վրաստանի վրա ճնշում գործադրելու նպատակով Ադրբեջանական ԽՍՀ-ը դիմեց սադրիչ գործողությունների և անհիմն մեղադրանքներով ձերբակալություններ սկսեց իրականացնել Բաքվում բնակվող վրացիների նկատմամբ (Ատրպէյճան կը համակերպի Վրաստանի վերջնագրին, 1921):

